# ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

# 0312 «ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

# ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

ԵՐԵՎԱՆ 2009

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

**Մոդուլի դասիչը՝** ՀՂԴ 4 - 09 - 001

**Մոդուլի նպատակը `**

Այս մոդուլը նախատեսված է այն անձանց համար, ովքեր կարիք ունեն զարգացնելու և ամրապնդելու հաղորդակցության իրենց ունակությունները: Մոդուլը կարելի է յուրացնել ոչ միայն մասնագիտական ուսումնառությանը զուգընթաց, այլև առանձին, քանի որ այն պարունակում է ընդհանուր կրթության և անձի զարգացման տարրեր: Ավարտելով այս մոդուլը ուսանողը ձեռք կբերի հաղորդակցության համար էական նշանակություն ունեցող ունակություններ, ինքնավստահություն, որպեսզի կարողանա արդյունավետ և ակտիվ կերպով դրսևորվել աշխատանքային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև՝ անձնական կյանքում:

**Մոդուլի տևողությունը՝** 36 ժամ

Տեսական ուսուցում՝ 18 ժամ

Գործնական պարապմունք՝ 18 ժամ

**Մուտքային պահանջներ՝**

Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա.

1. Սահմանել ուսումնառության անձնական նպատակները.
2. Բանավոր և գրավոր տեղեկատվություն կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին .
3. Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ.
4. Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ.
5. Կատարել փաստաթղթավորում:

**Գնահատման կարգը՝**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Սահմանել ուսումնառության անձնական նպատակները**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները.

բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները.

գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի սահմանել ուսումնառության անձնական նպատակները, պլանավորել և կիրառել ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանը ուղղված ուսումնառության գործընթացները,սահմանել ուսումնառության տարբեր եղանակները: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 2 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 2 ժամ |

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածքը.

բ. կատարված հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ.

գ. տեղեկատվության առանձնացում/ խմբավորումը նպատակային է կատարում.

դ. հաղորդումը իրականացնում է՝ հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր, ինչպես նաև կառաջադրվեն տեղեկատվության նպատակային խմբավորման աշխատանքներ բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք ստուգելու նպատակով:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 2 ժամ |

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները.

- պարզաբանումներ ստանալու ձգտումը
- գրառումներ կատարելը
- ամփոփելը

բ. ազատ ձևով ձևակերպում, արտահայտում, պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները.
գ. ցուցաբերում է համոզելու հստակություն.
դ. կատարում է ճիշտ ամփոփում (եզրափակում):

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Սովորողին կառաջադրվեն իրավիճակներ, որտեղ կարող է պաշտպանել իր գաղափարները, կտրվեն խնդիրներ և երկխոսության ընթացքում դիմացինին համոզելու, իր խոսքն ամփոփելու, եզրակացություն անելու կարողությունները ստուգելու վերաբերյալ:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, առաջադրվող խնդիրների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 4 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 4. Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամաներ, քարտեզներ և նկարներ**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա. ճիշտ է նախանշում սխեմաների աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները.
բ. մեկնաբանման համար օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին առաջադրվում են սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ, մեկնաբանման, դրանց նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները ներկայացնելու կարողությունները ստուգելու նպատակով:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների միջոցով: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիտակտիկ նյութեր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 2 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 4 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կատարել փաստաթղթավորում**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա. ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերն ըստ նրանց նշանակության.

- դիմում
- ինքնակենսագրություն (տրված տարբեր տեսակի ֆորմատներով)

- պաշտոնական և ոչ պաշտոնական նամակներ
- արձանագրություն
- երաշխավորագիր և այլն.

բ. ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղը և դերը.

գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին տրամադրվում են տարբեր փաստաթղթեր՝ պահանջելով ըստ նշանակության խմբավորում և տեղեկատվությունների փաստաթղթավորում՝ ըստ տեսակների:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, տարբեր փաստաթղթերի օգտագործման, տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորման միջոցով: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիտակտիկ նյութեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 6 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 6 ժամ |

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»**

**Մոդուլի դասիչը՝** **ԱԱՕ 4- 09 – 001**

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել կազմակերպություններում աշխատանքային անվտանգության պահպանման, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման կարողություններ:

**Մոդուլի տևողությունը՝** 36 ժամ

Տեսական ուսուցում՝ 20 ժամ

Գործնական պարապմունք՝ 16 ժամ

**Մուտքային պահանջները՝** Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. իմանա աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները.
2. իմանա անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները ձեռնարկություններում.
3. իմանա սանիտարիայի և հիգիենայի պահանջները.
4. ցուցաբերի առաջին օգնություն:

**Գնահատման կարգը՝**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1.** Իմանալ աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը.
բ. ճիշտ է ներկայացնում կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը.
գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը.
դ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները:
ե. ճիշտ է ներկայացնում կազմակերպությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը.
զ. ճիշտ է ներկայացնում կազմակերպության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կոնկրետ հարցեր կառաջադրվեն աշխատանքի պաշտպանության բնագավառի օրենքների, այլ նորմատիվ ակտերի, կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ընդհանուր հարցերի վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն, կարողանում է որոշակի եզրահանգումներ կատարել:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքի պաշտպանության բնագավառի օրենքներ, այլ նորմատիվ ակտեր, ուսումնական գրականություն, հրահանգներ, լրացվող փաստաթղթերի նմուշներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական ուսուցում՝ 6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2.** Իմանալ անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները հանրակրթական կազմակերպություններում:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա. ճիշտ է ներկայացնում սարքավորումների օգտագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները.
բ. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը.
գ. ճիշտ է ներկայացնում հակահրդեհային պաշտպանության կանոնները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կտրվի թեսթ՝ ոչ պակաս 10 հարցերով, յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առնվազն 3 պատասխանով, որոնցից մեկը ճիշտ է: Ուսանողը պետք է նշի, թե յուրաքանչյուր կոնկրետ հարցում որն է ճիշտ պատասխանը:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե թեսթի հարցերին տրվեն անսխալ պատասխաններ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, անվտանգության կանոնների հրահանգներ, անվտանգության նպատակներով օգտագործվող միջոցներ և այլն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական ուսուցում՝ 6 ժամ

Գործնական աշխատանք՝ 6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.** Իմանալ սանիտարիայի և հիգիենայի պահանջները.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները.

բ. ճիշտ է ներկայացնում դասասենյակների միկրոկլիմայի նկատմամբ նորմատիվային պահանջները.

գ. ճիշտ է թվարկում աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները.

դ. ճիշտ է ներկայացնում լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը:

**Գնահատման միջոց**

Արդյունքի գնահատումը կատարվելու է թեսթի միջոցով, որը պարունակելու է դասասենյակներին ներկայացվող սանիտարական և հիգիենիկ պահանջները, օրգանիզմի վրա ազդող հիմնական տարբեր բացասական ազդակների և դրանց ազդեցության տակ առաջացող հնարավոր վնասվածքները: Առանձին հարցերով պարզաբանվելու է յուրաքանչյուր իրավիճակում վնասակար ազդեցությունները կանխելու և դրանցից պաշտպանվելու քայլերը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե թեսթի առաջադրանքը կատարվում է առնվազն 60 տոկոսով:

**Մեթոդաբանությունը և ռեսուրսները**

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական միջոցներ, ուսումնական գրականություն:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակը**

Տեսական ուսուցում՝ 6 ժամ

Գործնական աշխատանք՝ 4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4.** Ցուցաբերել առաջին բուժօգնություն:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ցուցադրում արհեստական շնչառության իրականացումը.

բ. ճիշտ է ցուցադրում սրտի աշխատանքի վերականգնման իրականացումը.

գ. ճիշտ է ցուցադրում արյան հոսքի դադարեցման իրականացումը և ճիշտ է դնում վիրակապ.

դ. ճիշտ է վիրակապում կոտրվածքները.

ե. ճիշտ է ցուցադրում այրվածքների դեպքում առաջին օգնության ցուցաբերումը.

գ. ճիշտ է ցուցադրում էլեկտրահարման դեպքում առաջին օգնության իրականացումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողը կոնկրետ գործողությունով պետք է ցույց տա մի քանի իրավիճակներում առաջին օգնության ցուցաբերելու կարգը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար կհամարվի, եթե ճիշտ ցուցաբերվի առաջին օգնությունը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական ուսուցում և գործնական աշխատատանք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ առաջին օգնությանը վերաբերող գրականություն, տեսաֆիլմեր, ցուցապաստառներ, առաջին օգնության միջոցներ և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն՝ 2 ժամ

Գործնական աշխատանք՝ 6 ժամ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

**Մոդուլի դասիչը՝** ԸԱԳՀ 4 -09-001

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքեր աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների մասին, ինչպես նաև ձևավորել ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողություններ:

**Մոդուլի տևողությունը՝** 54 ժամ

Տեսական ուսուցում՝ 24 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 30 ժամ

**Մուտքային պահանջները՝**

Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. տիրապետի աշխատանքի տեղավորվելու կարողությունների.
2. դրսևորի անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ.
3. տիրապետի աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատի թիմում.
4. իմանա աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ.
5. դրսևորի քննադատական մտածողություն.
6. կառավարի սթրեսը և ժամանակը, առաջացած պրոբլեմներին և կոնֆլիկտներին տա համապատասխան լուծումներ:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Տիրապետել աշխատանքի տեղավորվելու կարողությունների

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է շարադրում գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները.
բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացները.
գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV).
դ. ճիշտ և մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ճիշտ է կազմում ինքնակենսագրությունը (CV) և մանրամասն բանավոր ներկայացնում իր կենսագրությունը:

**ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական ուսուցում՝ 6 ժամ
Գործնական պարապմունք՝ 6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2.** Դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողությունները.
բ. ճիշտ է ներկայացնում գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետորեն հարաբերվելու օրինակներ.
գ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատասխանատվության դրսևերումներ.
դ. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու դրսևորումներ:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը տվել է հիմնավոր և ճիշտ պատասխաններ հարցերի առնվազն 70 %-ին:

**ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում՝ նաև տեսաֆիլմեր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական ուսուցում՝ 2 ժամ
Գործնական պարապմունք՝ 3 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.** Տիրապետել աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատել թիմում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները, արժեքները և կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները.
բ. ճիշտ է ներկայացնում թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները.
գ. ճիշտ է ներկայացնում թիմային խնդիրների լուծման մեթոդները,
դ. թիմային աշխատանքի առաջադրված իրավիճակում դրևորում է անհրաժեշտ վարքագիծ՝ ցուցաբերելով փոխօգնություն, համբերատարություն, նվիրվածություն աշխատանքին և ընկերներին:
ե. ճիշտ վերաբերմունք է դրսևորում և հարգալից է գործընկերների նկատմամբ.
զ. առաջարկում է խնդրի ճիշտ լուծումներ առաջադրված պրոբլեմային իրավիճակում:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողն ըստ առաջադրված իրավիճակի ճիշտ է կառուցում միջանձնային հարաբերությունները, կարողանում է հանդես գալ թիմի անդամ՝ համագործակցելով մյուսների հետ, ճիշտ է կողմնորոշվում վիճահարույց հարցերում և դրանց տալիս է համապատասխան լուծումներ կամ պատասխաններ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

**ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական ուսուցում՝ 4 ժամ

Գործնական պարապմունք՝ 8 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4.** Իմանալ աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվել ղեկավարի հետ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է բացատրում աշխատանքային կարգապահության և ճշտապահության կարևորությունը.
բ. ճիշտ է ներկայացնում ղեկավարի հետ հարաբերվելու ձևերը, իր և ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները.
գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում պատշաճ հարաբերություն դրսևորելու կարողություն:

**ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

**ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական ուսուցում՝ 2 ժամ

Գործնական պարապմունք`	2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5.** Դրսևորել քննադատական մտածողություն:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա. ճիշտ է գնահատում տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը.

բ. ստացած տեղեկատվությունը ճիշտ և արդյունավետորեն համադրում է առկա գիտելիքների հետ.

գ. իրականացնում է կառուցողական քննադատություն և ճիշտ է բացատրում կառուցողական քննադատության կարևորությունը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում կառուցողական քննադատություն ցուցաբերելու կարողություն:

**ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական ուսուցում`	4 ժամ

Գործնական պարապմունք`	3 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 6.** Կառավարել սթրեսը և ժամանակը, լուծել պրոբլեմներ և կոնֆլիկտներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում սթրեսի կանխարգելման և անխուսափելի սթրեսին դիմակայելու մեթոդները.

բ. ճիշտ է կազմում իր աշխատանքային պլանը (պայմանական աշխատանքային պլան).

գ. ճիշտ է ներկայացնում ժամանակի արդյունավետ օգտագործման միջոցները.

դ. բացահայտում և ճիշտ է սահմանում պրոբլեմը տրված իրավիճակում.

ե. ճիշտ է վերլուծում պրոբլեմը, տալիս է լուծման ճիշտ տարբերակ և գնահատում արդյունքը.

զ. բացահայտում է ցանկացած կոնֆլիկտի պատճառները.

է. ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի կանխարգելման եղանակները, կարողանում է դրանց տալ արագ ու արդյունավետ լուծումներ:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում սթրեսին դիմակայելու մեթոդները և ճիշտ կազմում պայմանական աշխատանքային պլանը, ըստ առաջադրված իրավիճակի առաջարկում է պրոբլեմի լուծման ճիշտ տարբերակ, ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի պատճառները և առաջարկում ճիշտ լուծումներ:

**ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, աշխատանքային պլանների օրինակներ, անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական ուսուցում՝ 6 ժամ

Գործնական պարապմունք՝ 8 ժամ

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»**

**Մոդուլի դասիչը՝** ՀՕՀ 4 - 09 - 001

**Մոդուլի նպատակը՝**

Այս մոդուլը նախատեսում է տալ տարրական գիտելիքներ MICROSOFT WORD տեքստային խմբագրի մասին, ուսանողի մոտ զարգացնել տեքստային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, ինչպես նաև փաստաթղթերի պահպանման, տպագրման և ինտերնետ ցանցում աշխատելու տարրական հմտություններ:

**Մոդուլի տևողությունը՝** 54 ժամ

Տեսական ուսուցում՝ 10 ժամ

Գործնական աշխատանք՝ 44 ժամ

**Մուտքային պահանջները՝**

Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը՝

1. կհասկանա WORD ծրագրի նշանակությունը, կկարողանա բացատրել ծրագրի կառուցվածքը, կկարողանա օգտագործել New, Open, Close գործիքները, կկարողանա տեղաշարժել Տեքստային Ցուցիչը տեքստի մեջ, կկարողանա փակել WORD ծրագիրը,
2. կկարողանա կատարել տեքստային փաստաթղթի մուտքագրման, խմբագրման, ֆորմատավորման տարրական գործողություններ,
3. կկարողանա պահպանել փաստաթուղթը,
4. կկարողանա կազմել և խմբագրել աղյուսակներ,
5. կկարողանա տեքստային փաստաթղթերում ներդնել գրաֆիկական օբյեկտներ, դրանց հետ կատարել տարրական խմբագրման գործողություններ,
6. կկարողանա տպագրել փաստաթուղթը,
7. կունենա ինտերնետում աշխատելու իմացություն:

**Գնահատման կարգը**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1 WORD ԾՐԱԳԻՐ (ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ)**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

- *իմանալ* Microsoft Word ծրագրի պատուհանի կառուցվածքը
- *բացել* նոր փաստաթուղթ
- ստեղնաշարի օգնությամբ *մուտքագրել*
    - տեքստ (առանց ֆորմատավորման)
    - մեծատառ նշաններ (SHIFT կոճակի օգնությամբ)
    - սիմվոլներ (SHIFT կոճակի օգնությամբ)
    - թվանշաններ

- *տեղաշարժել* Տեքստային ցուցիչը տեքստի մեջ
- *կատարել* տարրական ուղղումներ տեքստում
- *փակել* փաստաթուղթը
- *բացել* առկա փաստաթուղթը
- *իմանալ* Zoom գործիքի հնարավորությունները

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

1. Ուսանողը բացում է Word ծրագիրը և բանավոր ներկայացնում նրա կառուցվածքը:
2. Ուսանողին մուտքագրելու համար տրվում է 2-3 պարբերություններից բաղկացած, առնվազն 100 բառ, թվանշաններ և սիմվոլներ պարունակող տեքստ: Ուսանողը պետք է բացի նոր փաստաթուղթ, կատարի մուտքագրումը և պահպանի այն նախօրոք առաջարկված տեղում:
3. Ուսանողը բացում է իր հավաքած և պահպանած փաստաթուղթը ու ցուցադրում է ստեղնաշարով Տեքստային Ցուցիչի տեղաշարժման հնարավորությունները:
4. Ուսանողը ցուցադրում է փաստաթղթի և Word ծրագրի փակման ձևերը:

Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե առաջադրանքն ընդհանուր առմամբ ճիշտ է կատարվում, թույլատրվում են որոշ անճշտություններ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ցուցադրական նյութեր, պրոյեկտոր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական ուսուցում՝ 4 ժամ

Գործնական աշխատանք՝ 16 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2 . Տեքստերի տարրական ֆորմատավորում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- *պատրաստել* Word ծրագիրը հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար
- *նշել* բառերը և տեքստային հատվածները
- *կատարել* մուտքագրված տեքստի պարզագույն *ֆորմատավորում*
- *կատարել* տողերի հավասարեցում
- *փոխել* միջտողային տարածությունները
- *փոխել* տեքստի գույնը Font Color գործիքով
- *փոխել* տեքստի գունային ֆոնը Highlight գործիքով
- *փոխել* պարբերության խորությունները լուսանցքներից
- *չեղյալ հայտարարել* (հրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները
- *վերականգնել* ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները
- *կրկնել* ֆորմատավորման վերջին գործողությունը
- Մենյուի File\Page Setup հրամանի օգնությամբ
  - փոխել լուսանցքների խորությունները Top, Bottom, Left, Right թվային դաշտերի օգնությամբ
  - ընտրել էջի ուղղաձիգ (Portrait) կամ հորիզոնական (Landscape) դիրքերը
  - ընտրել թղթի չափերը Paper  Size ցուցակի օգնությամբ
- *պատճենել* տեքստը
- *տեղափոխել* տեքստը
- *տողադարձել* տեքստը
- *համարակալել* էջերը մենյուի Insert\Page Numbers... հրամանով

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողին մուտքագրելու համար տրվում մոտ 50 բառ պարունակող հայերեն տեքստ:
2. Ուսանողին մուտքագրելու համար տրվում է մոտ 100 բառից կազմված՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն բառեր պարունակող, թվանշաններով և տարբեր սիմվոլներով տեքստ:
3. Ուսանողը բացում է նախօրոք պատրաստված փաստաթուղթը և ցուցադրում է մկնիկով և ստեղնաշարով տեքստը նշելու հնարավորությունները:
4. Ուսանողին տրվում է տարրական ֆորմատավորումներ պարունակող տպագրված փաստաթղթի օրինակ, որի վրա հասկանալի կերպով բացատրված են օգտագործված ֆորմատավորումները: Ուսանողը պետք է համակարգչի մեջ առկա նույն տեքստի չֆորմատավորված տարբերակի վրա կիրառի առաջարկված ֆորմատավորումները:
5. Ուսանողը պատրաստի փաստաթղթի օրինակի վրա ցուցադրում է տեքստի պատճենահանման և տեղափոխման գործողությունները:
6. Ուսանողը կատարում է տողադարձումներ իրեն տրված պատրաստի փաստաթղթի օրինակի վրա:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե հիմնական մասերով առաջադրանքները ճիշտ են կատարվում, սակայն հնարավոր են աննշան, ոչ էական բացթողումներ, վրիպակներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, պրոյեկտոր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 4 ժամ

Գործնական աշխատանք՝ 12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Փաստաթղթի պահպանում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- *իմանալ* փաստաթղթերի պահպանման իմաստը
- *պահպանել* նոր ստեղծված փաստաթուղթը
- *պահպանել* փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողը պետք է նկարագրի փաստաթղթերի պահպանման իմաստը, բերի տրամաբանական օրինակներ:
2. Ուսանողը մուտքագրում է մինչև 50 բառից բաղկացած տեքստ և պահպանում է այն՝ օգտագործելով Save As... պատուհանը:
3. Ուսանողին տրվում է պատրաստի մուտքագրված փաստաթուղթ, որի մեջ նա կատարում է փոփոխություններ: Հանձնարարվում է պահպանել կատարված ընթացիկ փոփոխությունները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում առաջադրանքները ամբողջությամբ և առանց էական սխալներ կատարելու դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումն իրականացվելու է գործնական պարապմունքների միջոցով: Պարապմունքներն անհրաժեշտ է իրականացնել անհատական համակարգիչների կաբինետում՝ ունենալով տարբեր փաստաթղթերի նմուշներ, որոնք անհրաժեշտ է ստեղծել և պահպանել:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Գործնական աշխատանք՝ 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Աղյուսակների պատրաստում և խմբագրում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- *պատրաստել* աղյուսակ
- աղյուսակի մեջ *մուտքագրել* տեքստ,
- *կատարել* ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ
- *ավելացնել* նոր տողեր և նոր սյուներ աղյուսակի մեջ
- *ջնջել* աղյուսակի տողերը և սյուները
- *փոխել* սյունակի լայնությունը Մկնիկի օգնությամբ
- *փոխել* տողի բարձրությունը Մկնիկի օգնությամբ
- *փոխել* աղյուսակի գծերի գույնը
- *գունավորել* աղյուսակի տողը և սյունը

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողին տրվում է աղյուսակի տպագրված օրինակ: Ուսանողը պետք է պատրաստի աղյուսակը առաջարկված ձևով, մուտքագրի տեքստը, ֆորմատավորի աղյուսակը և տպագրի:
2. Ուսանողը բացում է նախօրոք պատրաստված աղյուսակը և կատարում է ֆորմատավորման գործողություններ դրա հետ, պահպանում է վերջնական տարբերակը և տպագրում: Գնահատումը կատարվում է տպագրված օրինակի հիման վրա:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքը կատարում է ճիշտ, սակայն թույլատրելի են նաև որոշ աննշան բացթողումներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ աղյուսակների առավել տարածված և կիրառելի նմուշների օրինակներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական ուսուցում՝ 1 ժամ

Գործնական աշխատանք՝ 4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5. Գրաֆիկական խմբագրում և նկարազարդում**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

- *գծագրել* գրաֆիկական օբյեկտներ
- *գծագրել* գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը
- *գծագրել* կանոնավոր պատկերներ
- *ֆորմատավորել* գրաֆիկական օբյեկտները՝
  - տեղափոխել դրանք փաստաթղթի տարբեր տարածքներ
  - պատճենել
  - պտտել
  - շրջել
  - փոխել չափերը
- *խմբավորել* գրաֆիկական օբյեկտները
- *հավասարեցնել* գրաֆիկական օբյեկտները իրար նկատմամբ
- *գծագրել* տեքստային բլոկներ
- *գունավորել* գրաֆիկական օբյեկտները
- *երանգավորել* գրաֆիկական օբյեկտները
- *ստվերավորել* գրաֆիկական օբյեկտները

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

1. Ուսանողին տրվում է երկրաչափական պատկերներ պարունակող փաստաթղթի տպագրված օրինակը: Ուսանողը պետք է պատրաստի այդ փաստաթուղթը և տպագրի: Գնահատումը կատարվում է բնօրինակի և տպագրված օրինակի համեմատության հիման վրա:
2. Ուսանողին տրվում է երկրաչափական պատկերներ պարունակող պատրաստի փաստաթուղթ: Նա այդ փաստաթղթի օրինակի վրա ցուցադրում է պատկերների ֆորմատավորման գործողությունները:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքներն ընդհանուր առմամբ ճիշտ են կատարվում, սակայն թույլատրելի է նաև որոշ աննշան թերություններ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների ձևով, անհատական համակարգիչների կաբինետում: Նպատակահարմար է ունենալ գրաֆիկական օբյեկտների նախապատրաստված ցանկ, որոնց հիման վրա աշխատելը հնարավորություն կտա ձեռք բերել արդյունքով սահմանված բոլոր կարողությունները:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական աշխատանք՝ 2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 6. Փաստաթղթի տպագրում**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

- Նախադիտման ռեժիմում *թերթել* փաստաթուղթը

- *իմանալ* Print պատուհանի ֆունկցիաները
- *տպագրել* փաստաթուղթը

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված որևէ տեքստային փաստաթուղթ և տպագրել այն:
2. Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված որևէ տեքստային փաստաթուղթ և դրա օրինակի վրա բացատրել Print պատուհանի ֆունկցիաները:

Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական հանձնարարությունը ուսանողը կատարում է անսխալ, իսկ պատուհանի ֆունկցիաները բացատրելիս կարող է նաև որոշ անճշտություններ թույլ տալ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը իրականացվելու է գործնական պարապմունքի միջոցով՝ անհատական համակարգիչների կաբինետում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Գործնական պարապմունք՝ 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 7. Ինտերնետում աշխատելու իմացություն

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- *իմանալ* Ինտերնետ հասկացության նշանակությունը
- *ճանաչել* Internet Explorer ծրագիրը, իմանալ դրա նշանակությունը
- *իմանալ* Ինտերնետային Հասցե հասկացությունը
- *իմանալ* History հրամանի նշանակությունը
- *իմանալ* Favorites հրամանի նշանակությունը
- *իմանալ* Stop հրամանի նշանակությունը
- *իմանալ* Refresh հրամանի նշանակությունը
- *իմանալ* Back և Forward կոճակների նշանակությունը
- *պատճենել* տեքստային տեղեկատվությունն ինտերնետային էջից
- *պատճենել* գրաֆիկական տեղեկատվությունն ինտերնետային էջից
- *իմանալ* տեղեկատվությունյի որոնման ինտերնետային ծառայությունները
- ըստ չափանիշների *որոնել* տեղեկատվություն
- *իմանալ* էլեկտրոնային փոստի նշանակություն
- *ուղարկել* և *ստանալ* էլեկտրոնային նամակներ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողին հանձնարարվում է ներկայացնել Internet Explorer ծրագրի պատուհանի կառուցվածքը, նրա հիմնական կոճակների նշանակությունը:
2. Ուսանողին հանձնարարվում է ցուցադրել History և Favorites հրամանները, բացատրել:
3. Ուսանողին հանձնարարվում է բացատրել Stop և Refresh հրամանների նշանակությունը:
4. Ուսանողին հանձնարարվում է բացատրել Back և Forward կոճակների նշանակությունը:
5. Ուսանողին հանձնարարվում է բացել որևէ ինտերնետային էջ և պատճենել տեքստային և գրաֆիկական տեղեկատվությունն այդ էջից:
6. Ուսանողին հանձնարարվում է կատարել տեղեկատվության որոնում որևէ թեմայի շուրջ՝ օգտագործելով ինտերնետային փնտրող ծառայությունները:

7. Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված էլեկտրոնային փոստը: Ուսանողը պետք է ցուցադրի էլեկտրոնային նամակների ուղարկման և ստացման գործողությունները, էլեկտրոնային փոստով ֆայլերի ուղարկման և ստացման քայլերը:

Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե կատարողական մակարդակով առաջադրանքը ճիշտ է կատարվում, սակայն թույլատրվում է տարբերակների ընտրության որոշ շեղումներ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում, որն ունի ինտերնետին միանալու հնարավորություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական ուսուցում՝ 1 ժամ

Գործնական աշխատանք՝ 4 ժամ

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

**ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ԴՏԴ 04-09-001**

**ՆՊԱՏԱԿԸ**

Այս մոդուլի նպատակը հայոց լեզվի, որպես մայրենի լեզու ուսուցման հիմք լինելու գործառնական գաղափարի յուրացումն է, ինչպես նաև ուսանողներին հայոց լեզվի հնչյունաբանության և բառագիտության, հայերենի ձևաբանության, խոսքի մասերի քերականական կարգերի մասին գիտելիքները գրավոր ու բանավոր խոսքում անսխալ կիրառելու հմտություններ տալը:

**ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 72 ժամ**

Տեսական պարապմունք՝ 24 ժամ

Գործնական աշխատանք՝ 48 ժամ

**ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ**

Այս մոդուլի յուրացման համար նախնական մասնագիտական գիտելիքներ անհրաժեշտ չեն:

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

Տվյալ մոդուլն ուսումնասիրելու արդյունքում ուսանողը պետք է.

1. Իմանա հայոց լեզվի դերն ու նշանակությունը որպես ուսուցման ազգային, պետական լեզու:
2. Իմանա հայոց լեզվի դերը որպես հաղորդակցության միջոց:
3. Իմանա հայերենի հնչյունաբանության, հայերենի հնչյունների, դրանց ճիշտ արտաբերման ու համապատասխան տառերի գրության առանձնահատկություններն ու կիրառությունը:
4. Իմանա հայոց լեզվի ձևաբանության առանձնահատկությունները, հայերենի խոսքի մասերի դերը, քերականական կարգերը, կազմությունը, ուղղագրությունը և դրանց ոճական կիրառությունը գրավոր ու բանավոր խոսքում:
5. Իմանա հայերենի բառագիտության և բառակազմության էական հատկանիշները և կարողանա ճիշտ գործածել դրանք սեփական խոսքի մեջ:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1.**

Իմանալ հայոց լեզվի դերն ու նշանակությունը որպես ազգային և պետական լեզու:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

Ուսանողը՝

1. Ճիշտ է ներկայացնում հայոց լեզվի դերը որպես ազգային և պետական լեզու:
2. Ճիշտ է ներկայացնում հայոց լեզվի՝ որպես ազգային և պետական լեզվի կիրառությունը Հայաստանի Հանրապետությունում:
3. Ճիշտ է մեկնաբանում հայոց լեզվի՝ որպես ազգային և պետական լեզվի ընկալման և կիրառման կրթական խնդիրները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կտրվեն հարցեր հայոց լեզվի, նրա կիրառության և կիրառման կրթական խնդիրների մասին, որպես հայ ժողովրդի ազգային և Հայաստանի Հանրապետության պետական լեզու: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն, հասկանում է հայոց լեզվի դերն ու նշանակությունը որպես ազգային և պետական լեզու, տիրապետում է հայոց լեզվի ընկալման և կիրառման կրթական խնդիրներին:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, հարցուպատասխանի կամ գրավոր աշխատանքի միջոցով:

Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր կամ գրավոր հարցերի առնվազն 80%-ին:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է համապատասխան մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, «Լեզվի մասին» ՀՀ օրենքը:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 2 ժամ

Գործնական աշխատանք՝ 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2.

Իմանալ հայոց լեզվի դերը որպես հաղորդակցության միջոց:

КԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ուսանողը`

1. Ճիշտ է ներկայացնում հայոց լեզվի դերը որպես հաղորդակցության միջոց:
2. Ճիշտ է ներկայացնում լեզվի հաղորդակցական գործառույթներն ու դրանց կիրառման ոլորտները:
3. Ճիշտ է ներկայացնում լեզվի դերը սոցիալական շփման, հաղորդակցության տարբեր մակարդակներում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվեն հարցեր հայոց լեզվի մասին, որպես հաղորդակցության և սոցիալական շփման միջոց: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն, ճիշտ է ներկայացնում հայոց լեզվի դերը որպես հաղորդակցության միջոց, հասկանում է լեզվի հաղորդակցական գործառույթներն ու դրանց կիրառման ոլորտները, ընկալում է լեզվի դերը սոցիալական շփման, հաղորդակցության տարբեր մակարդակներում:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, հարցուպատասխանի կամ գրավոր աշխատանքի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր ու գրավոր հարցերի առնվազն 70%-ին:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է համապատասխան մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, «Լեզվի մասին» ՀՀ օրենքը:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք` 2 ժամ

Գործնական աշխատանք` 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3.

Իմանալ հայերենի հնչյունաբանության, հայերենի հնչյունների, դրանց ճիշտ արտաբերման ու համապատասխան տառերի գրության առանձնահատկություններն ու կիրառությունը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ուսանողը`

1. Ճիշտ է ներկայացնում հայերենի հնչյունները, դրանց տեսակները:
2. Ճիշտ է մեկնաբանում հնչյուն և տառ փոխհարաբերությունները, հայերենի այբուբենը
3. Ճիշտ է ներկայացնում հայրենեի հնչյունների արտասանությունն ու տառերի գրությունը
4. Ճիշտ է ներկայացնում ձայնավորների վանկարար նշանակությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվեն հարցեր ըստ կատարման չափանիշների բովանդակության:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, հարցուպատասխանի կամ գրավոր աշխատանքի միջոցով:

Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր ու գրավոր հարցերի առնվազն 70%-ին, լիարժեք տիրապետում է հայերենի այբուբենին, հայերենի հնչյունների արտասանությունն ու տառերի գրությանը:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է համապատասխան մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, հայոց լեզվի դասագրքեր:

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք` 2 ժամ

Գործնական աշխատանք` 8 ժամ

## ԱՐԴՅՈՒՆՔ 4

Իմանալ հայոց լեզվի ձևաբանության առանձնահատկությունները, հայերենի խոսքի մասերի դերը, քերականական կարգերը, կազմությունը, ուղղագրությունը և դրանց ոճական կիրառությունը գրավոր ու բանավոր խոսքում:

## ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ուսանողը`

1. Ճիշտ է ներկայացնում հայերենի ձևաբանությունը, հայերենի խոսքի մասերն իրենց ընդհանուր և առանձնահատուկ գծերով:
2. Ճիշտ է ներկայացնում ձևաբանության ուսումնասիրության հատուկ քերականական երևույթները (թիվ, դեմք, ժամանակ, եղանակ, դրանցից բխող հոլովում, խոնարհում և այլն) և դրանց գործնական կիրառությունը:

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվեն հարցեր ըստ կատարման չափանիշների:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, հարցուպատասխանի կամ գրավոր աշխատանքի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր ու գրավոր հարցերի առնվազն 90%-ին, լիարժեք տիրապետում է հայերենի քերականական կանոններին:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է համապատասխան մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, հայոց լեզվի դասագրքեր:

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք` 10 ժամ

Գործնական աշխատանք` 20 ժամ

## ԱՐԴՅՈՒՆՔ 5

Իմանալ հայերենի բառագիտության և բառակազմության էական հատկանիշները և կարողանալ ճիշտ գործածել դրանք սեփական խոսքի մեջ:

## ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ուսանողը`

1. Ճիշտ է ներկայացնում հայերենի բառագիտությունն իր բնորոշ գծերով:
2. Ճիշտ է ներկայացնում բառի իմաստային շերտերը և գիտի դրանց գործածության հնարավորությունները:

3. Ճիշտ է ներկայացնում բառի տեսակներն ըստ իմաստի և ձևի /նույնանիշ և համանիշ, հոմանիշ և հականիշ, համանուն/ և գիտի դրանց ճիշտ գործածությունը:
4. Ճիշտ է ներկայացնում բառերի կազմության հիմնական տարրերը:
5. Ճիշտ է ներկայացնում բառերի տեսակներն ըստ կազմության, գիտի դրանց գրավոր և բանավոր կիրառությունը:
6. Ճիշտ է ներկայացնում բառապաշարի հարստացման հիմնական միջոցները:

### ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվեն հարցեր ըստ կատարման չափանիշների:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, հարցուպատասխանի կամ գրավոր աշխատանքի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր ու գրավոր հարցերի առնվազն 90%-ին:

### ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է համապատասխան մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, հայոց լեզվի դասագրքեր:

### ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 8 ժամ

Գործնական աշխատանք՝ 16 ժամ

### ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ԴՏԴ 04-09-002

### ՆՊԱՏԱԿԸ

Այս մոդուլի նպատակը հիմնականում գործնական ուսուցման ճանապարհով ուսանողներին հայերենի շարահյուսական առանձնահատկությունները սեփական գրավոր և բանավոր խոսքում ճիշտ գործածելու հմտություններ տալն է: Խոսքն առավել տպավորիչ դարձնելու համար ոճաբանության տարբեր տեսակների իմացությունն ու գրավոր և բանավոր խոսքում դրանցից ճիշտ օգտվելու կարողությունների ձևավորումը:

### ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 72 ժամ

Տեսական պարապմունք՝ 26 ժամ

Գործնական աշխատանք՝ 46 ժամ

### ՄՈՒՏՔԱՅԻՆ ԺԱՄԱՆՉՆԵՐ

Այս մոդուլի յուրացման համար նախնական մասնագիտական գիտելիքներ անհրաժեշտ չեն:

### ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Տվյալ մոդուլն ուսումնասիրելու արդյունքում ուսանողը պետք է

1. Իմանա հայոց լեզվում նախադասության, նրա կազմության, տեսակների առանձնահատկությունները և գործածական հնարավորությունները առօրյա խոսքում:
2. Իմանա դարձվածքի, որպես լեզվական միավորի, կազմությունը և նրա գործածական հնարավորությունները կենդանի խոսքում:

3. Իմանա բառարանների (մասնավորապես հայերենի) տեսակները և կարողանա օգտվել դրանցից:
4. Իմանա հայերենի ոճաբանության խնդիրները և կարողանա վարժ կերպով օգտվել ոճական տարատեսակներից բանավոր և գրավոր խոսք կազմելիս:
5. Իմանա և սեփական խոսքի մեջ կիրառի հայոց լեզվի արտահայտչական և պատկերավորության միջոցները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1.

Իմանալ հայոց լեզվում նախադասության, նրա կազմության, տեսակների առանձնահատկությունները և գործածական հնարավորությունները առօրյա խոսքում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ուսանողը՝

1. Ճիշտ է ներկայացնում նախադասության տեսակների գործածության բազմազանությունը:
2. Ճիշտ է ներկայացնում նախադասության կազմությունը և առանձին կառույցների կիրառման նպատակահարմարությունը՝ կապված կենդանի խոսքի առանձնահատկություններից:
3. Ճիշտ է ներկայացնում նախադասության կառուցվածքը, նրա ոճական և կիրառական յուրահատկությունները սեփական խոսքում:
4. Կարողանում է ճիշտ, հայերեն նախադասության կառույցի մեջ դնել թարգմանաբար ներկայացված գրավոր խոսքը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվեն հանձնարարություններ կազմելու նախադասություններ, հետևելով կատարման չափանիշներով սահմանված պահանջներին: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է կազմել սահմանված պահանջներին համապատասխան նախադասություններ և կիրառել դրանք սեփական խոսքում:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի կամ գրավոր աշխատանքի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերի կամ ու գրավոր պահանջների առնվազն 80%-ին:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է համապատասխան մասնագիտական գրականություն, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ:

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 8 ժամ

Գործնական աշխատանք՝ 14 ժամ

## ԱՐԴՅՈՒՆՔ 2.

Իմանալ դարձվածքի, որպես լեզվական միավորի, կազմությունը և նրա գործածական հնարավորությունները կենդանի խոսքում:

## ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ուսանողը՝

1. Ճիշտ է բացատրում դարձվածքը որպես լեզվական միավոր, կարողանում է ինքնուրույն կազմել և ներկայացնել կոնկրետ դարձվածքների համատեքստին մոտ այլ օրինակներ սեփական կենսափորձից:
2. Ճիշտ է ներկայացնում դարձվածքների, թևավոր արտահայտությունների և առածների ծագման ուղիները և կարողանում է ինքնուրույն օրինակներ դուրս բերել իրեն շրջապատող իրականությունից:

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվեն հարցեր և հանձնարարություններ համաձայն կատարման չափանիշների: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն, կարողանում է ներկայացնել կոնկրետ դարձվածքների համատեքստին մոտ այլ օրինակներ սեփական կենսափորձից և ինքնուրույն օրինակներ դուրս բերել իրեն շրջապատող իրականությունից:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, հարցուպատասխանի կամ գրավոր աշխատանքի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր ու գրավոր հարցերի առնվազն 80%-ին:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է համապատասխան մասնագիտական գրականություն, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ:

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 4 ժամ

Գործնական աշխատանք՝ 6 ժամ

## ԱՐԴՅՈՒՆՔ 3.

Իմանա բառարանների (մասնավորապես՝ հայերեն բառարանների) տեսակները և կարողանա օգտվել դրանցից:

## ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ուսանողը՝

1. Ճիշտ է ներկայացնում պարզագույն բառարանների կառուցվածքն ու դրանցից օգտվելու ձևերը:
2. Ճիշտ է կարողանում ընտրել անհրաժեշտ տեսակի բառարանը և օգտվել դրանից:

3. Ճիշտ է մեկնաբանում բազմազան բառարանների կիրառական նշանակությունը:
4. Կարողանում է օգտվել էլեկտրոնային տարբեր բառարաններից:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվեն հարցեր և հանձնարարություններ համաձայն կատարման չափանիշների: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը գիտի և կարողանում է հմտորեն կիրառել և օգտագործել բազմազան, այդ թվում և էլեկտրոնային բառարաններ:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է բառարաններից օգտվելով գրավոր թարգմանություններ կատարելու միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը բնագրին համապատասխան իրեն ծանոթ օտար լեզվով 80-100 բառ տեքստ է թարգմանել: Թույլատրվում է նաև ոչ բառացի, տեքստի բովանդակությանը մոտ կամ նրա իմաստը լիարժեք արտահայտող թարգմանություն:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ են համապատասխան բառարաններ, այդ թվում և էլեկտրոնային բառարաններ, համակարգչային տեխնիկա:

ՈւՍՈւՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 4 ժամ

Գործնական աշխատանք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4

Իմանալ հայերենի ոճաբանության խնդիրները և կարողանա վարժ կերպով օգտվել ոճական տարատեսակներից բանավոր և գրավոր խոսք կազմելիս:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ուսանողը՝

1. Գիտի և ճիշտ է ներկայացնում հայերենի գործառական, խոսակցական, գեղարվեստական, գիտական, հրապարակախոսական, վարչական ոճերը և նրանց առանձնահատկությունները:
2. Կրողանում է հայերեն ճիշտ ոճի մեջ դնել թարգմանաբար ներկայացված խոսքը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվեն հանձնարարություններ համաձայն կատարման չափանիշների: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը գիտի և կարողանում է բանավոր և գրավոր խոսք կազմելու ընթացքում հմտորեն կիրառել և օգտագործել տարբեր ոճեր:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում տարբեր ոճերով (գործառական, խոսակցական, գեղարվեստական, գիտական, հրապարակախոսական, վարչական) գրված նախադասությունների կամ բանավոր խոսքի հիման վրա: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողն անսխալ օգտագործում է տարատեսակ ոճեր իր բանավոր կամ գրավոր խոսքում: Թույլատրվում են որոշակի թերություններ, որոնք էապես չեն ազդում կատարված աշխատանքի որակի վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ են մասնագիտական և գեղարվեստական գրականություն, այդ թվում և օտար լեզվով, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ:

ՈւՍՈւՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք`   6 ժամ

Գործնական աշխատանք`   12 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5**

Իմանալ և սեփական խոսքի մեջ կիրառել հայոց լեզվի արտահայտչական և պատկերավորության միջոցները:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

Ուսանողը

1. Գիտի հայերենի կետադրությունը /տրոհության, բացահայտության, առոգանության նշանները/ և նրանց ճիշտ գործածությունը գրավոր և բանավոր խոսքում:
2. Ճիշտ է ներկայացնում հայոց լեզվի արտահայտչական և պատկերավորության միջոցները /համեմատություն, փոխաբերություն, չափազանցություն, այլաբանություն, մակդիր և այլն/ սեփական գրավոր և բանավոր ստեղծագործություններում:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կտրվեն հարցեր և հանձնարարություններ համաձայն կատարման չափանիշների:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ գիտի և սեփական խոսքի մեջ կիրառում էլ հայոց լեզվի արտահայտչական և պատկերավորության միջոցները: Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, հարցուպատասխանի կամ գրավոր աշխատանքի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր ու գրավոր հարցերի առնվազն 80%-ին:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է համապատասխան մասնագիտական գրականություն, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք`   4 ժամ

Գործնական աշխատանք`   6 ժամ

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ**

**ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ` ԴՏԴ 04-09-003**

**ՆՊԱՏԱԿԸ**

Մոդուլը մշակվել է ուսանողների խոսքի զարգացման, նրանց ստեղծագործական ունակությունների բացահայտման և զարգացման, ուսանողնրի կողմից այդ ունակությունները զարգացնող մեթոդների և հնարքների յուրացման, ուսանողների լեզվազգացողության և լեզվամտածողության կատարելագործման, հաղորդակցման հմտությունների զարգացման նպատակներով:

Մոդուլը նախատեսված է նախադպրոցական հաստատությունների դաստիարակների և կրտսեր դպրոցների դասվարների, 6-10 տարեկան երեխաների հետ աշխատող այլ մասնագետների համար:

**ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ`   72   ժամ**

Տեսական պարապմունք`   10 ժամ

Գործնական աշխատանք`   62 ժամ

**ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ**

Մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի ,,Մանկական գրականություն և բանահյուսություն,, մոդուլը:

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Մոդուլի յուրացման արդյունքում ուսանողը պետք է`

1. կարողանա պարզ, հակիրճ, գրագետ և ստեղծագործաբար կառուցել խոսքը` ճշտորեն կիրառելով իր քերականական գիտելիքները,
2. կարողանա համակարգչի կիրառմամբ խմբագրել է իր և ընկերների խոսքը,
3. կարողանա գրավոր և բանավոր փոխադրել ցանկացած տեքստ` անհրաժեշտության դեպքում ստեղծագործական մոտեցում ցուցաբերելով կամ զուգահեռ ուսումնական կոնկրետ առաջադրանք կատարելով,
4. կարողանա տարբեր նպատակներով և ուղղվածության տեքստեր կազմել,
5. կարողանա միտքը հստակ, հասկանալի ձևակերպել, պարզ, հակիրճ, գրագետ, ստեղծագործաբար կառուցել իր խոսքը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1**

Ուսանողը պետք է կարողանա պարզ, հակիրճ, գրագետ և ստեղծագործաբար կառուցել իր խոսքը:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

Ուսանողը`

1. Խոսքը լսարանին, խնդրին /թեմային/, առարկային իրավիճակին համապատասխան է կառուցում:
2. Խոսքը հակիրճ` առանց ավելորդաբանությունների է կառուցում:
3. Տիրապետում է մանկանն ուղղված գրավոր և բանավոր խոսքի լեզվի առանձնահատկություններին:
4. Նկարագրում է մարդկանց (ընկերներին, դասավանդողներին, ստեղծագործությունների հերոսների, կենդանիներ), երևույթներ (բնական, զգացմունքային, ֆիզիոլոգիական), դեպքեր:
5. Պատմություններ, հեքիաթներ է հորինում և տարբեր միջոցներով ներկայացնում դրանք:
6. Որևէ իրական դեպքի մասին մանրամասն և հակիրճ է պատմում:
7. Դասախոսի առաջարկած կամ իր ընտրած թեմային վերաբերող հետազոտական աշխատանք է կատարում:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կտրվեն հանձնարարություններ համաձայն կատարման չափանիշների: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է պարզ, հակիրճ, գրագետ և ստեղծագործաբար կառուցել իր բանավոր և գրավոր խոսքը, ներկայացնում է դասախոսի առաջարկած կամ իր ընտրած թեմային վերաբերող հետազոտական աշխատանքը:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է ուսանողի բանավոր ներկայացման կամ գրավոր աշխատանքի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը կարողանում է ճիշտ կողմնորոշվել զանազան իրավիճակներում և իր խոսքը կառուցել այդ իրավիճակներին համապատասխան:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է հիմնականում գործնական և ինքնուրույն պարապմունքների ձևով, նպատակ ունենալով ուսանողների մոտ զարգացնելու ստեղծագործական մտածողություն, խոսքը կառուցելու ազատություն: Անհրաժեշտ է համապատասխան մասնագիտական գրականություն, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 2 ժամ

Գործնական աշխատանք՝ 10 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2**

Ուսանողը կարողանում է համակարգչի կիրառմամբ խմբագրել իր և իր ընկերների խոսքը:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

Ուսանողը՝

1. Ճիշտ է պահպանում է տեքստի իմաստային, կառուցվածքային և ոճական ամբողջականությունը:
2. Գիտի և տարբերում է լեզվական ճիշտ և սխալ կառույցները առավել տարածված լեզվական սխալների ճիշտ տարբերակները:
3. Տեղին է գործածում մայրենի լեզվի բառապաշարի տարբեր շերտերը:
4. Կարողանում է տեքստից հանել տեքստը ծանրացնող, տեքստին ոչինչ չտվող լեզվական ավելորդ միավորները կամ դրանք փոխարինում համարժեք միավորներով:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կտրվեն հանձնարարություններ համաձայն կատարման չափանիշների: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է համակարգչի կիրառմամբ խմբագրել իր և իր ընկերների խոսքը:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է ուսանողի ներկայացրած աշխատանքի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը կարողանում է ճիշտ խմբագրել իր և մյուսների բանավոր և գրավոր խոսքը՝ հմտորեն օգտագործելով մայրենի լեզվի բառապաշարային հարստությունը, միաժամանակ խուսափելով ավելորդ արտահայտություններից, չծանրացնելով տեքստը ոչ տեղին բառակապակցություններով: Թույլատրվում են աննշան վրիպումներ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է հիմնականում գործնական և ինքնուրույն պարապմունքների ձևով, նպատակ ունենալով ուսանողների մոտ զարգացնելու ստեղծագործական մտածողություն, խոսքը կառուցելու ազատություն: Անհրաժեշտ է համապատասխան մասնագիտական գրականություն, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, անհրաժեշտության դեպքում՝ նաև համակարգչային տեխնիկա:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 2 ժամ

Գործնական աշխատանք՝ 10 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3**

Կարողանալ գրավոր և բանավոր ցանկացած տեքստ փոխադրել՝ անհրաժեշտության դեպքում ստեղծագործական մոտեցում ցուցաբերելով կամ զուգահեռ ուսումնական կոնկրետ առաջադրանք կատարելով:

## ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ուսանողը

1. Վերապատմում, փոխադրում է տեքստը՝ որոշակի առաջադրանքով:
2. Տրված տեքստը բանավոր ներկայացնում է լսարանին՝
   - առանց մեկնաբանությունների,
   - սեփական մեկնաբանություններով:
3. Տրված տեքստը փոխադրում է
   - իր անունից,
   - հեղինակի անունից,
   - հերոսներից մեկի կամ նրա անունից, ում վերաբերում է տեքստը:
4. Տեքստի բովանդակությունից ելնելով՝ տեքստը վերապատմում է՝
   - դրականորեն տրամադրված անձի կամ տեքստի հերոսի անունից
   - բացասականորեն տրամադրված անձի կամ տեքստի հերոսի անունից
   - չեզոք անձի կամ տեքստի հերոսի անունից
5. Դասախոսի առաջարկած տարբեր տեքստեր վերաշարադրում է մանկան տարիքին, ընկալումներին, մտածողությանը համապատասխան լեզվով:
6. Տարբեր ուսուցողական նպատակներով ընդարձակում կամ համառոտում է ցանկացած տեքստ:

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվեն հանձնարարություններ համաձայն կատարման չափանիշների: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է փոխադրել գրավոր և բանավոր ցանկացած տեքստ՝ անհրաժեշտության դեպքում ստեղծագործական մոտեցում ցուցաբերելով կամ զուգահեռ ուսումնական կոնկրետ առաջադրանք կատարելով :

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է ուսանողի կողմից ներկայացրած տեքստի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը կարողանում է ճիշտ վերապատմել կամ փոխադրել տեքստի բովանդակությունը՝ մանուկներին հասանելի լինելու համար հմտորեն օգտագործելով մայրենի լեզվի բառապաշարային հարստությունը, միաժամանակ խուսափելով ավելորդ արտահայտություններից, չծանրացնելով տեքստը ոչ տեղին բառակապակցություններով ու բարդ շարահյուսությամբ: Թույլատրվում են ոչ էական բովանդակային թերություններ:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է հիմնականում գործնական և ինքնուրույն պարապմունքների ձևով, նպատակ ունենալով ուսանողների մոտ զարգացնելու ստեղծագործական մտածողություն, խոսքը կառուցելու ազատություն ու անկաշկանդություն: Անհրաժեշտ է համապատասխան մասնագիտական և մանկական գրականություն, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ:

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 2 ժամ

Գործնական աշխատանք՝ 14 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4

Կարողանալ կազմել տարբեր նպատակներով և ուղղվածության տեքստեր:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ուսանողը՝

1. Պաշտոնական և այլ նամակներ, գրություններ, հաշվետվություններ է գրում:
2. Տարբեր բնագավառներին վերաբերող տեղեկատվական նյութեր է պատրաստում:
3. Թեմային, ժանրին համապատասխան ճիշտ է գործածում մասնագիտական տերմինները, ձևակերպումները:
4. Ուսանողը տրամաբանորեն ներկայացնում է իր դիտարկումները, հետազոտությունները և եզրակացությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվեն հանձնարարություններ համաձայն կատարման չափանիշների: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է կազմել տարբեր նպատակների ծառայող և ուղղվածություն ունեցող գրություններ կամ տեքստեր:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է ուսանողի կողմից ներկայացրած գրության կամ տեքստի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը պատշաճ կերպով կարողանում է պատրաստել պաշտոնական նամակներ, գրություններ, հաշվետվություններ, տեղեկատվական նյութեր, այլ տեքստեր, պահպանելով գրավոր խոսքի բոլոր ընդունված կանոնները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է հիմնականում գործնական և ինքնուրույն պարապմունքների ձևով, նպատակ ունենալով ուսանողների մոտ զարգացնելու ստեղծագործական մտածողություն, խոսքը կառուցելու ազատություն ու անկաշկանդություն: Անհրաժեշտ է համապատասխան մասնագիտական գրականություն, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, համակարգչային տեխնիկա:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

| | |
|---|---|
| Տեսական պարապմունք՝ | 2 ժամ |
| Գործնական աշխատանք՝ | 14 ժամ |

ԱՐԴՅՈՒՆՔ 5

Կարողանալ միտքը հստակ, հասկանալի ձևակերպել, պարզ, հակիրճ, գրագետ, ստեղծագործաբար կառուցել իր խոսքը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

1. Ցանկացած նյութ ներկայացնելիս կարողանում է խոսքը կառուցել իր ասելիքի տրամաբանությունը հաշվի առնելով:
2. Կարողանում է իր դատողությունները ներկայացնել փաստարկներով և պատճառաբանություններով՝ խուսափելով ավելորդաբանություններից:
3. Տրամաբանորեն ներկայացնել իր դիտարկումները, հետազոտությունները և եզրակացությունները, անհրաժեշտության դեպքում նաև առաջարկություններ անել:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կտրվեն հանձնարարություններ համաձայն կատարման չափանիշների: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է իր դատողությունները ներկայացնել համապատասխան փաստարկներով և պատճառաբանություններով՝ խուսափելով ավելորդաբանություններից, ցանկացած նյութ ներկայացնելիս կարողանում է խոսքը կառուցել իր ասելիքի տրամաբանությունը հաշվի առնելով, ձևակերպել միտքը հստակ, հասկանալի, իսկ խոսքը՝ պարզ, հակիրճ, գրագետ, ստեղծագործաբար:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է ուսանողի կողմից ներկայացրած գրավոր և բանավոր խոսքի միջոցով:

Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը պատշաճ կերպով կարողանում է որևէ նյութ պատրաստել որևէ խնդրի շուրջ և ելույթ ունենալ լսարանում կամ որևէ համաժողովում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է հիմնականում գործնական և ինքնուրույն պարապմունքների ձևով, նպատակ ունենալով ուսանողների մոտ զարգացնելու ստեղծագործական մտածողություն, խոսքը կառուցելու ազատություն ու անկաշկանդություն: Անհրաժեշտ է համապատասխան մասնագիտական գրականություն, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, համակարգչային տեխնիկա:

**ՈւՍՈւՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 2 ժամ

Գործնական աշխատանք՝ 14 ժամ

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ**

**ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ԴՏԴ 04-09-004**

**ՆՊԱՏԱԿԸ**

Մոդուլի նպատակն է կրտսեր դպրոցի ապագա ուսուցիչներին մաթեմատիկական գիտելիքներ և հմտություններ տալը, որոնք անհրաժեշտ արդյունավետ ուսուցում կազմակերպելու համար: Այստեղ ուսանողները կյուրացնեն թվաբանության, մեծությունների, երկրաչափության և հանրահաշվի տարրերի մասին գաղափարները՝ մաթեմատիկայի առարկայական չափորոշիչների հիման վրա:

**ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 144 ժամ**

Տեսական պարապմունք՝ 60 ժամ

Գործնական աշխատանք՝ 84 ժամ

**ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

Այս մոդուլի յուրացման համար նախնական մասնագիտական գիտելիքներ անհրաժեշտ չեն:

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Տվյալ մոդուլն ուսումնասիրելու արդյունքում ուսանողը պետք է.

1. Իմանա բնական թվերի բազմությունը, զրոն, թվարկության դիրքային և ոչ դիրքային համակարգերը: Համեմատի բնական թվերը:
2. Իմանա թվաբանական գործողությունների հատկությունները:

3. Իմանա առարկաների համեմատում, դասակարգումը և խմբավորումն ըստ որոշակի հատկանիշների: Գաղափար ունենա դրանց փոխկապակցվածության մասին:
4. Ճանաչի երկրաչափական մարմինները և պատկերները, իմանա չափման միավորները և դրանց կիրառությունը:
5. Իմանա կոորդինատային ճառագայթի վրա բնական թվի պատկերման ձևը, կարողանա բնական թվերը համեմատել կոորդինատային ճառագայթի միջոցով:
6. Իմանա հանրահաշվի տարրերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1

Իմանալ բվնական թվերի բազմությունը, գրոն: Թվարկության դիրքային և ոչ էլ դիրքային համակարգերը: Համեմատի բնական թվերը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ուսանողը՝

1. Գիտի բնական թվերը օգտագործել առարկաների քանակը հաշվելիս, համարակալելիս և արդյունքները գրանցելիս:
2. Գիտի համեմատել բնական թվերը:
3. Ճիշտ է մեկնաբանում թվարկության դիրքային և ոչ դիրքային համակարգերը:
4. Կարող է բացատրել թվային կարգերը, թվային դասերը:
5. Կարող է բնական թիվը կլորացնել մինչև թվային կարգը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, գործնական կատարման, հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված է թվարկության դիրքային և ոչ դիրքային համակարգերը, թվային կարգերը, թվային դասերը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

| | |
|---|---|
| Տեսական պարապմունք՝ | 10 ժամ |
| Գործնական աշխատանք՝ | 14 ժամ |

Արդյունք 2.

Իմանալ թվաբանական գործողությունների հատկությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ուսանողը

1. Ճիշտ է կատարում թվաբանական գործողություններ բնական թվերի հետ:
2. Ճիշտ է կիրառում թվաբանական գործողությունների հատկությունները:
3. Ճիշտ է թիվը ներկայացնում, կարգային գումարելիների գումարի տեսքով:
4. Գիտի թվաբանական գործողությունների կատարման հերթականությունը:
5. Գիտի մնացորդով բաժանում կատարել:
6. Գիտի զույգ և կենտ թվերի բազմությունը;

7. Գիտի բաժանելիության հայտանիշները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, գործնական կատարման, հարց ու պատասխանի միջոցով: Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված է թվաբանական գործողությունների հատկությունները, թիվը կարգային գումարելիների գումարի տեսքով, բաժանելիության հայտանիշները:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 10 ժամ

Գործնական աշխատանք՝ 14 ժամ

**Արդյունք 3.**

Իմանալ առարկաների համեմատումը, դասակարգումը և խմբավորումն ըստ որոշակի հատկանիշների: Գաղափար ունենալ փոխկապակցվածության մասին:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

Ուսանողը՝

1. Կարող է ճիշտ համեմատել և դասակարգել առարկաներն ըստ մեծության կամ այլ հատկանիշների:
2. Գաղափար ունի ապրանքի գին-քանակություն-արժեք, արագություն-ժամանակ-ճանապարհ փոխկապակցվածությունների մասին:
3. Գիտի կատարել առարկաների փոխդասավորվածություն վերև-ներքև, առաջ-հետ, աջ-ձախ, բարձր-ցածր:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի հիման վրա:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք դրսևորված են գիտելիքներ գին-քանակություն-արժեք, արագություն-ժամանակ-ճանապարհ փոխկապակցվածությունների, առարկաների փոխդասավորվածության, առարկաներն ըստ որոշակի հատկանիշների համեմատելու մասին:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, գծապատկերներ, մանիպուլյացիայի առարկաներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 10 ժամ

Գործնական աշխատանք՝ 14 ժամ

**Արդյունք 4.**

Ճանաչել երկրաչափական մարմինները և պատկերները, իմանալ չափման միավորները և դրանց կիրառությունը:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

Ուսանողը՝

1. Գիտի չափման միավորները, չափման միավորների ընտրությունը, չափման գործիքները:

2. Գիտի նույն մեծության չափման տարրերի միավորների միջև եղած կապերը:
3. Գիտի երկրաչափական պատկերները՝ եռանկյուն, քառանկյուն, շրջան, այլն:
4. Կարող է հաշվել պարագիծ, մակերես:
5. Հարթ պատկերները բաժանել, տրոհել մասերի և ստանալ նոր պատկերներ:
6. Գիտի պարզ դեպքերում կառուցել տրված պատկերի համաչափ պատկերը ուղղի կամ կետի նկատմամբ:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի հիման վրա:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են կարողություններ չափման գործիքներ գործածելու, երկրաչափական պատկերներ կառուցելու, դրանք մասերի տրոհելու, պարագիծ և մակերես հաշվելու վերաբերյալ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, գծապատկերներ, չափման գործիքներ, երկրաչափական պատկերներ, երկրաչափական մարմիններ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 10 ժամ

Գործնական աշխատանք՝ 14 ժամ

**Արդյունք 5.**

Իմանալ կոորդինատային ճառագայթի վրա բնական թվի պատկերման ձևը: Կարողանալ բնական թվերը համեմատել կոորդինատային ճառագայթի միջոցով:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

**Ուսանողը**

1. Գիտի կոորդինատային ճառագայթի վրա պատկերել տրված բնական թիվը:
2. Գիտի, թե ի՞նչ բան է կետի կոորդինատը:
3. Գիտի բնական թվերը համեմատել կոորդինատային ճառագայթի միջոցով:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, գործնական կատարման, հարց ու պատասխանի ձևով:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված է բնական թվերը կոորդինատային ճառագայթի միջոցով համեմատելու, կետի կոորդինատը որոշելու կարողություն:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, գծապատկերներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 10 ժամ

Գործնական աշխատանք՝ 14 ժամ

**Արդյունք 6**

Իմանալ հանրահաշվի տարրերը:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

**Ուսանողը**

1. Գիտի թվաբանական գործողությունների հատկությունների բառային և նշանային ձևակերպումը:
2. Գիտի մեկ գործողություն պարունակող հայերեն նախադասությունը գրել թվային արտահայտության տեսքով և հակառակը:
3. Գիտի արդյունքի և բաղադրիչների միջև եղած կապը:
4. Գիտի լուծել խնդիրներ: Կարողանում խնդրի լուծման համար օգտագործել գծապատկերներ, աղյուսակներ, սխեմաներ, տարբերանշաններ և այլն:

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, գործնական կատարման, հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են խնդիրների վերլուծության, խնդրի լուծման համար գծապատկերներ, աղյուսակներ, սխեմաներ, տարբերանշաններ օգտագործելու կարողություններ:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈւԹՅՈւՆ ԵՎ ՌԵՍՈւՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, գծապատկերներ, սխեմաներ, տարբերանշաններ, աղյուսակներ:

## ՈւՍՈւՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 10 ժամ

Գործնական աշխատանք՝ 14 ժամ:

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ 04-09-005

## ՆՊԱՏԱԿԸ

Մոդուլը մշակվել է համաշխարային գրականության դասական ստեղծագործությունների միջոցով զարգացնել ուսանողների աշխարհընկալումը, ուսանողներին հնարավորություն տալ հաղորդակցվել համամարդկային արժեքների հետ, ընդլայնել նրանց աշխարհայացքը, զարգացնել նրանց գեղագիտական ճաշակը, վերլուծական մտածողությունը:

Մոդուլը նախատեսված է տարրական դպրոցի դասվարների համար:

## ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 72 ժամ

Տեսական պարապմունք՝ 16 ժամ

Գործնական աշխատանք՝ 56 ժամ

## ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողնողը պետք է յուրացրած լինի ,,Մանկական գրականություն և հայ ժողովրդական բանահյուսություն,, մոդուլը:

## ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Մոդուլի յուրացման արդյունքում ուսանողը պետք է.

1. Ճանաչի համաշխարհային գրականության դասականների լավագույն ստեղծագործությունները:
2. Իմանա գրական ժանրերը, դրանց առանձնահատկությունները, ծանոթ լինի դրանց դասական նմուշներին:
3. Կարողանա ներկայացնել և փաստարկել գրական ստեղծագործությունների արժանիքները:
4. Կարողանա գրական երկի քննարկում կազմակերպել՝ գործածելով տարբեր մեթոդներ:

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1.

Ճանաչել համաշխարհային գրականության դասականների լավագույն ստեղծագործությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ուսանողը՝

1. Զևավորված գրական ճաշակ ունի և ստեղծագործությունների ընտրությունը կատարում է հիմնական դասական գրականությունից:

2. Դրանք ներկայացնում է լսարանին՝ հաշվի առնելով լսարանի հետաքրքրությունները, հոգևոր պահանջները, հետաքրքրություն առաջացնում ստեղծագործության նկատմամբ:

3. Կարողանում է ընթերցել կամ արտասանել ընկերների համար:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվեն հանձնարարություններ ինքնուրույն ընտրել համաշխարհային գրականության դասականների առնվազն 10 գործ: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը գիտի և կարողանում է ճանաչել և ընտրել համաշխարհային գրականության դասականների լավագույն համարվող ստեղծագործությունները:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է համաշխարհային գրականության որևէ դասականի լավագույն համարվող ստեղծագործության ընտրության և այն հետաքրքիր ձևով լսարանում ներկայացման միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողի ներկայացրած ստեղծագործությունը հետաքրքրություն է առաջացնում լսարանում և մղում մյուս սովորողներին ընթերցել այդ ստեղծագործությունը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է գեղարվեստական գրականության մեծ ընտրանի, մեթոդական ձեռնարկներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 4 ժամ

Գործնական աշխատանք՝ 14 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2.

Իմանալ գրական ժանրերը, դրանց առանձնահատկությունները, ծանոթ լինի դրանց դասական նմուշներին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

1. Գիտի գրական ժանրերը, կարողանում է ներկայացնել գրական ստեղծագործության ժանրային առանձնահատկությունները, դրանց առվելությունները, դրանց առավելությունները ու թույլ կողմերը:
2. Ճիշտ է ներկայացնում գրական ուղղությունները, դրանցով գրված գրական ստեղծագործությունները:
3. Ճիշտ է ներկայացնում ստեղծագործության գաղափարը, կապը իրականության՝ ժամանակի, հասարակարգերի, քաղաքական, տնտեսական իրավիճակների հետ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվեն հանձնարարություններ ինքնուրույն գտնելու գրական տարբեր ժանրերին պատկանող առնվազն 15 ստեղծագործություններ: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե

ուսանողը գիտի և կարողանում է տարբերակել գրական ժանրերը և ուղղությունները, դրանց առանձնահատկությունները, ծանոթ է դրանց դասական նմուշներին:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է ուսանողի կողմից ընտրված և դասախոսի հետ համաձայնեցված որևէ գրական ժանրի ներկայացման ու վերլուծության միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողն անսխալ ներկայացնում ու վերլուծում է տվյալ գրական ժանրը, դրա կապը իրականության՝ ժամանակի, հասարակարգերի, քաղաքական, տնտեսական իրավիճակների հետ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է գեղարվեստական գրականության մեծ ընտրանի, մեթոդական ձեռնարկներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 4 ժամ

Գործնական աշխատանք՝ 14 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3**

Կարողանալ ներկայացնել և փաստարկել գրական ստեղծագործությունների արժանիքները:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԻՇՆԵՐ**

1. Ճիշտ է ներկայացնում գրական ստեղծագործության հատկանիշները և կարողանում է գնահատել դրանք:
2. Գրական ստեղծագործության:
3. Կարողանում է գնահատել ստեղծագործության լեզուն, հեղինակի գրելաոճը:
4. Գիտի պատկերավորման միջոցները, ըստ դրանց կարողանում է և գնահատել ստեղծագործությունը:
5. Ճիշտ է ներկայացնում չափածո ստեղծագործության առանձնահատկությունները և կարողանում է գնահատել դրանք:
6. Ճիշտ է ներկայացնում պատկերավորման միջոցները, կարողանում է դրանք գնահատել կոնկրետ ստեղծագործության մեջ:
7. Կարողանում է կերպար, կերպարի զարգացում ներկայացնել կերպարներ վերլուծել՝ ելնելով իր ունեցած գիտելիքներից և կենսափորձից:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կտրվեն հանձնարարություններ համաձայն կատարման չափանիշների: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը տվյալ գրական ստեղծագործության մի շարք առանձնահատկությունները վերլուծելով կարողանում է ներկայացնել այդ ստեղծագործության հիմնական հատկանիշները, տալով համապատասխան գնահատական ստեղծագործության սյուժեին, լեզվին, կերպարներին, հեղինակի կողմից կիրառված պատկերավորման միջոցներին:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է դասախոսի հանձնարարությամբ ուսանողի կողմից որևէ ստեղծագործության վերլուծության ներկայացման միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում, վերլուծում և գնահատում իրեն հանձնարարված ստեղծագործությունը, անդրադառնալով դրա կառուցվածքին, բովանդակությանը, սյուժեին, դրանց միջև եղած կապին, պատկերավորման միջոցներին, կերպարներին:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է գեղարվեստական գրականության մեծ ընտրանի, մեթոդական ձեռնարկներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 4 ժամ

Գործնական աշխատանք՝ 14 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4.

Կարողանալ գրական երկի քննարկում կազմակերպել՝ գործածելով տարբեր մեթոդներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

1. Քննարկման համար դասական բարձրարժեք ստեղծագործություններ է ընտրում:
2. Ընտրում է այնպիսի ստեղծագործություններ, որ հասանելի լինեն քննարկմանը մասնակցող խմբի մտքին և բավարարեն հոգևոր պահանջները:
3. Քննարկման միջոցով բացահայտում է, հասկանալի է դարձնում հեղինակի ասելիքը՝ ստեղծագործության գաղափարը:
4. Կարողանում է քննարկման միջոցով տարբեր մոտեցումներ, կարծիքներ, բացահայտել:
5. Կարողանում է գրական վերլուծությունը կազմակերպել այնպես, որ արժևորվի ստեղծագործությունն իր արտահայտման ձևի մեջ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողն ինքնուրույն, դասախոսի ուղղորդմամբ, ընտրում է առնվազն 5 դասական բարձրարժեք ստեղծագործություն: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողի ինքնուրույն ընտրած ստեղծագործությունները բավարարում են կատարման 2-րդ չափանիշի պահանջները, և ուսանողը լսարանում տարբեր մեթոդների օգտագործմամբ կազմակերպում է դրանց համակողմանի քննարկում իր ընկերների հետ:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է ուսանողի կողմից որևէ բարձրարժեք ստեղծագործության քննարկման հաջող կազմակերպման միջոցով, որի արդյունքում լսարանին հասկանալի է դարձնում հեղինակի ասելիքը՝ ստեղծագործության գաղափարը: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը կարողանում է ինքնուրույն հաջողությամբ կազմակերպել որևէ բարձրարժեք ստեղծագործության քննարկում ու վերլուծություն:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ են գեղարվեստական գրականության մեծ ընտրանի, մեթոդական ձեռնարկներ:

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք`    4 ժամ

Գործնական աշխատանք`    14 ժամ:

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` ԱՆԱՏՈՄԻԱ, ՖԻԶԻՈԼՈԳԻԱ, ՀԻԳԻԵՆԱ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

## ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ` ԴՏԴ-04-09-006

## ՆՊԱՏԱԿԸ

Այս մոդուլի նպատակն է կրտսեր դպրոցական երեխաների անատոմիաֆիզիոլոգիական առանձնահատկությունները և հիգիենայի տարրական կանոնները ուսուցանելու միջոցով ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ երեխաների օրգանիզմի աճի և զարգացման ընդհանուր օրինաչափությունների մասին` երեխաների առողջության պահպանման, հնարավոր հիվանդությունները և առողջության խանգարումները ժամանակին նկատելու և համապատասխան գործողություններ իրականացնելու համար:

## ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ` 108 ժամ

Տեսական պարապմունք`    64 ժամ

Գործնական աշխատանք`    44 ժամ

## ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Այս մոդուլի յուրացման համար ուսանողը նախապես պետք է ուսումնասիրած լինի «Անվտանգություն և առաջին օգնություն» մոդուլը:

**Արդյունքները**

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է`

1. Իմանա երեխայի օրգանիզմի աճի և զարգացման հիմնական օրինաչափությունները և նրանց վրա ազդող գործոնները:
2. Իմանա երեխայի օրգան-համակարգերի անատոմիական կառուցվածքային առանձնահատկությունները:
3. Իմանա երեխայի օրգան-համակարգերի ֆիզիոլոգիական առանձնահատկությունները:
4. Իմանա մանկական տարածված հիվանդությունները և դրանք ծնող պատճառները:
5. Իմանա երեխայի առողջության պահպանման հիմնական կանոնները և կարողանա կիրառել դրանք:

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**Արդյունք 1.**

Իմանալ երեխայի օրգանիզմի աճի և զարգացման հիմնական օրինաչափությունները և նրանց վրա ազդող գործոնները

**Կատարման չափանիշները**

Ուսանողը`

1. ճիշտ է ներկայացնում երեխայի օրգանիզմի աճի առանձնահատկությունները և նրա վրա ազդող գործոնները:

2. ճիշտ է ներկայացնում երեխայի օրգանիզմի զարգացման առանձնահատկությունները և նրա վրա ազդող գործոնները:
3. Օգտվում է երեխաների ֆիզիկական զարգացման ցուցանիշների տեղեկատվական տիպօրինակներից և դրա հիման վրա ճիշտ հետևություններ է կատարում երեխաների օրգանիզմի աճի և զարգացման մասին:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կտրվի երեխայի օրգանիզմի աճի և զարգացման մասին տեղեկատվական տիպօրինակ, որի միջոցով նա պետք է ներկայացնի երեխայի օրգանիզմի աճի և զարգացման առանձնահատկությունները:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է գործնական աշխատանքի միջոցով՝ տիպօրինակի միջոցով ներկայացնելով սեփական աճի ու զարգացման առանձնահատկությունները :

Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը օգտվելով երեխայի օրգանիզմի աճի և զարգացման մասին տեղեկատվական տիպօրինակից կատարում է ճիշտ մեկնաբանություններ: Թույլատրվում են աննշան շեղումներ ճիշտ պատասխանից:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ երեխայի օրգանիզմի աճի և զարգացման մասին տեղեկատվական տիպօրինակ, ցուցապաստառներ, նկարներ, համապատասխան գրականություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 4 ժամ

Գործնական աշխատանք՝ 2 ժամ

**Արդյունք 2.**

Իմանալ երեխայի օրգան-համակարգերի անատոմիական կառուցվածքային առանձնահատկությունները

**Կատարման չափանիշները**

Ուսանողը՝

1. Մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս կմախքի, մկանների տեղն ու կառուցվածքը և գիտի հենաշարժիչ համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները
2. Մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս սիրտ-անոթային համակարգի տեղն ու կառուցվածքը և գիտի սիրտ-անոթային համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները
3. Մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս շնչառական համակարգի տեղն ու կառուցվածքը և գիտի շնչառական համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները
4. Մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս մարսողական համակարգի տեղն ու կառուցվածքը և գիտի մարսողական համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները
5. Մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս միզազատական համակարգի տեղն ու կառուցվածքը և գիտի միզազատական համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները

6. Մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս ներզատիչ գեղձերի տեղը և գիտի նրանց կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները
7. Մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս աղջիկների և տղաների սեռական օրգանների տեղն ու կառուցվածքը և սեռական համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները
8. Մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս նյարդային համակարգի տեղն ու կառուցվածքը և գիտի նյարդային համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները
9. Մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս վերլուծիչների տեղն ու կառուցվածքը
10. Մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս մաշկի կառուցվածքը և մաշկի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվեն հարցեր ըստ կատարման չափանիշների և կհանձնարարվի մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ցույց տալ կատարման չափանիշներով սահմանված օրգանների և դրանց համակարգերի տեղն ու կառուցվածքային առանձնահատկությունները:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, հարցուպատասխանի, գրավոր աշխատանքի կամ գործնական աշխատանքի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ճիշտ է ցույց տալիս տվյալ օրգանի տեղ ցուցապաստառի կամ մուլյաժի վրա և ճիշտ է բացատրում դրա կառուցվածքային առանձնահատկությունները:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ երեխայի ներքին օրգանների մուլյաժ, ցուցապաստառներ, համապատասխան գրականություն: Հնարավորության դեպքում կարելի է օգտագործել երեխայի ներքին օրգանների էլեկտրոնային լուսանկարներ կամ պատկերներ:

## ՈւՍՈւՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 20 ժամ
Գործնական աշխատանք՝ 16 ժամ

**Արդյունք 3.**

Իմանալ երեխայի օրգան-համակարգերի ֆիզիոլոգիական առանձնահատկությունները

**Կատարման չափանիշները**

Ուսանողը՝

1. Ճիշտ է ներկայացնում կմախքի և մկանների ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները
2. Ճիշտ է ներկայացնում սիրտ-անոթային համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները
3. Ճիշտ է ներկայացնում շնչառական համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները
4. Ճիշտ է ներկայացնում մարսողական համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները

5. Ճիշտ է ներկայացնում միզազատական համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները
6. Ճիշտ է ներկայացնում ներզատիչ գեղձերի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները
7. Ճիշտ է ներկայացնում աղջիկների և տղաների սեռական օրգանների սեռական համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները
8. Ճիշտ է ներկայացնում նյարդային համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները
9. Ճիշտ է ներկայացնում վերլուծիչների ֆիզիոլոգիան
10. Ճիշտ է ներկայացնում մաշկի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները
11. Ճիշտ է բացատրում նյութերի և էներգիայի փոխանակության տարիքային առանձնահատկությունները
12. Ճիշտ է բացատրում բարձրագույն նյարդային գործունեության մեխանիզմը երեխաների մոտ:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կտրվեն հարցեր ըստ կատարման չափանիշների:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, հարցուպատասխանի, գրավոր աշխատանքի կամ գործնական աշխատանքի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր ու գրավոր հարցերի առնվազն 80%-ին:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ցուցապաստառներ, համապատասխան գրականություն, մուլյաժներ: Հնարավորության դեպքում կարելի է օգտագործել երեխայի օրգանների ֆիզիոլոգիային վերաբերող էլեկտրոնային լուսանկարներ կամ պատկերներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 20 ժամ

Գործնական աշխատանք՝ 10 ժամ

**Արդյունք 4.**

Իմանալ մանկական տարածված հիվանդությունները և դրանց հիմնական ախտանիշները

**Կատարման չափանիշները**

Ուսանողը՝

1. Գիտի մանկական տարածված հիվանդությունների անվանումները և ճիշտ է ներկայացնում այդ հիվանդությունների հիմնական ախտանիշները
2. Գիտի հիվանդությունների առաջացման, տարածման և կանխման ընդհանուր մեխանիզմը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կտրվեն հարցեր ըստ կատարման չափանիշների և կհանձնարարվի կատարել գործնական աշխատանք: Նրան կտրվեն մանկական տարածված հիվանդությունների հիմնական ախտանիշները, որոնց միջոցով ուսանողը պետք է անվանի այդ հիվանդությունը:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, հարցուպատասխանի, գրավոր աշխատանքի կամ գործնական աշխատանքի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր ու գրավոր հարցերի առնվազն 90%-ին և լիարժեք գիտի մանկական տարածված հիվանդություններն ըստ նրանց ախտանիշների:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ցուցապաստառներ, նկարներ, համապատասխան գրականություն, մուլյաժներ, համակարգչային տեխնիկա: Հնարավորության դեպքում կարելի է օգտագործել հիվանդությունների ախտանիշներին, դրանց կանխարգելմանը նպատակաուղղված միջոցառումներին վերաբերող տեսաֆիլմեր:

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 6 ժամ

Գործնական աշխատանք՝ 4 ժամ

**Արդյունք 5.**

Իմանալ երեխայի առողջության պահպանման հիմնական կանոնները և կարողանալ կիրառել դրանք:

**Կատարման չափանիշները**

Ուսանողը՝

1. ճիշտ է բացատրում հիգիենայի՝ որպես առողջության պահպանման և ամրապնդման գիտության նպատակը
2. ճիշտ է ներկայացնում երեխայի առողջությունը ամրապնդող և թուլացնող գործոնները
3. Գիտի հենաշարժիչ համակարգի դեֆորմացիայի պատճառները և ճիշտ է ցույց տալիս կեցվածքի պահպանման ձևերը
4. ճիշտ է ներկայացնում հիգիենիկ ռեժիմի կազմակերպումը վարակիչ հիվանդությունների ժամանակ
5. ճիշտ է ներկայացնում սննդամթերքի և սննդի ռեժիմի նկատմամբ հիգիենիկ պահանջները
6. ճիշտ է կիրառում աշխատանքի և հանգստի հերթագայումը ուսուցման գործընթացում
7. ճիշտ է հաշվում երեխայի պուլսը, շնչառության հաճախականությունը,
8. Արյան ճնշումը չափելու գործիքով ճիշտ է չափում երեխայի արյան ճնշումը
9. ճիշտ է ներկայացնում երեխայի հագուստին և կոշիկին ներկայացվող հիգիենիկ պահանջները
10. ճիշտ է ներկայացնում մաշկի, մազերի և եղունգների խնամքի հիգիենայի կանոնները
11. ճիշտ է ներկայացնում ուսումնական հաստատությանը ներկայացվող հիգիենիկ պահանջները

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվեն հարցեր ըստ կատարման չափանիշների 1, 2. 4, 5, 9, 10, 11 կետերի և կհանձնարարվեն գործնական աշխատանքներ ըստ կատարման չափանիշների 3, 6, 7, 8 կետերի:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, հարցուպատասխանի, գրավոր աշխատանքի կամ գործնական աշխատանքի միջոցով:

Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր ու գրավոր հարցերի առնվազն 90%-ին, ճիշտ է ցույց տալիս կեցվածքի պահպանման ձևերը, ճիշտ է կազմում աշխատանքի և հանգստի հերթագայման պլանը, ճիշտ է հաշվում պուլսը, շնչառության

հաճախականությունը, ճիշտ է շահագործում արյան ճնշումը չափելու գործիքը և ճիշտ է չափում արյան ճնշումը:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ցուցապաստառներ, համապատասխան գրականություն, մուլյաժներ, վարկյանաչափ, արյան ճնշումը չափլու գործիք: Հնարավորության դեպքում կարելի է օգտագործել էլեկտրոնային լուսանկարներ կամ պատկերներ, ցուցադրել տեսաֆիլմեր:

**ՈւՍՈւՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 14 ժամ

Գործնական աշխատանք՝ 12 ժամ:

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ**

**ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ԴՏԴ 04-09-007**

**ՆՊԱՏԱԿԸ**

Այս մոդուլի նպատակն է ուսանողներին հնարավորություն տալ յուրացնելու ուսուցման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ համակարգչային գրաֆիկական, հաշվարկներ կատարող, խմբագրական ծրագրեր: Համակարգիչները և էլեկտրոնային տեղեկատվական այլ տեխնիկական ձևերն այժմ ամենալայն տարածումն են գտել գիտության, ինժեներատեխնիկական գործունեության, բիզնեսի և արդյունաբերության, կառավարման աշխատանքների և պրակտիկ գործունեության բնագավառում: Այդ պատճառով տեխնոլոգիաների օգտագործումը պետք է սովորելու և սովորեցնելու անբաժանելի մասը դառնա:

**ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 36 ժամ**

Տեսական պարապմունք՝ 6 ժամ

Գործնական աշխատանք՝ 30 ժամ

**ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

Այս մոդուլի ուսումնասիրման համար անհրաժեշտ է «Համակարգչային օպերատորության հիմունքներ» մոդուլի նախնական ուսումնասիրումը:

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Տվյալ մոդուլն ուսումնասիրելու արդյունքում ուսանողը պետք է.

1. Իմանա տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման և կիրառման փիլիսոփայությունը կրթության արդյունավետության բարձրացման համատեքսում:
2. Իմանա դպրոցական համակարգում ՏՀՏ-ների ներդրման ու կիրառման հնարավորությունները:
3. Իմանա և կարողանա ՏՀՏ-ների և ուսուցման-ուսումնառության նոր մոտեցումների համակցում կատարել:
4. Իմանա ուսուցման մեջ տեխնոլոգիաների ինտեգրման հնարավորությունները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1

Իմանալ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման և կիրառման փիլիսոփայությունը կրթության արդյունավետության բարձրացման համատեքսում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ուսանողը.

1. Ճիշտ է ներկայացնում ժամանակակից գիտական և հասարակական կյանքում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) դերը:
2. Ճիշտ է բացատրում տեղեկատվական և գիտելիքահեն հասարակության առանձնահատկությունները:
3. Գիտի և կարողանում է ճիշտ ներկայացնել ՏՀՏ-ների ամենատարածված տեսակները և դրանց ուսումնական հեռանկարերն ու կիրառությունը (համակարգչային տարբեր ծրագրեր, ինտերնետ, էլեկտրոնային փոստ և այլն):
4. Ճիշտ է պատկերացնում կրթական համակարգի և տեխնոլոգիաների համակցումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, գործնական կատարման, հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված է ժամանակակից գիտական և հասարակական կյանքում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) դերը, տեղեկատվական և գիտելիքահեն հասարակության առանձնահատկությունները, ՏՀՏ-ների ամենատարածված տեսակները և դրանց ուսումնական հեռանկարներն ու կիրառությունը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, համակարգիչներ, տեղեկատվական/հաղորդակցական տեխնիկական այլ միջոցներ, ինտերնետ կապ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 2 ժամ

Գործնական աշխատանք՝ 5 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2

Իմանալ դպրոցական համակարգում ՏՀՏ-ների ներդրման ու կիրառման հնարավորությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ուսանողը.

1. Ունի տեղեկատվությունն ինքնուրույն որոնելու, ընտրելու, հավաքելու, ուսումնասիրելու և դասակարգելու կարողություն:
2. Ունի տեխնոլոգիական համակարգերը, տեղեկատվությունն ու ծրագրերը պատասխանատվությամբ օգտագործելու կարողություն:
3. Ճիշտ է ներկայացնում ուսումնառության մակարդակը բարձրացնելու, արդյունավետությունը մեծացնելու և ստեղծագործական մոտեցումը խթանելու նպատակով տեխնոլոգիաներ կիրառելու կարևորությունը:
4. Ճիշտ է ներկայացնում ուսուցումը Իրական կյանքի հետ կապելու, իրական խնդիրներ լուծելու համար տեխնոլոգիական միջոցներ կիրառելու առավելությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման, անհատական կամ խմբային նախագծերի (պրոյեկտների), ներկայացման (պրեզենտացիաների) հարց ու պատասխանի միջոցով.

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ըստ կատարման չափանիշների Ճիշտ է ներկայացնում ուսումնառության մակարդակը բարձրացնելու, արդյունավետությունը մեծացնելու և ստեղծագործական մոտեցումը խթանելու նպատակով տեխնոլոգիաներ կիրառելու կարևորությունը, ուսուցումը իրական կյանքի հետ կապելու, իրական խնդիրներ լուծելու համար տեխնոլոգիական միջոցներ կիրառելու առավելությունները, ինչպես նաև լիարժեք ներկայացված է տեղեկատվությունն ինքնուրույն որոնելու, ընտրելու, հավաքելու, ուսումնասիրելու և դասակարգելու, տեխնոլոգիական համակարգերը, տեղեկատվությունն ու ծրագրերը պատասխանատվությամբ օգտագործելու կարողություն:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, համակարգիչներ, տեղեկատվական/հաղորդակցական տեխնիկական այլ միջոցներ, ինտերնետ կապ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 2 ժամ

Գործնական աշխատանք՝ 5 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3.

Իմանալ և կարողանալ ՏՀՏ-ների և ուսուցման-ուսումնառության նոր մոտեցումների համակցում կատարել:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ուսանողը՝

1. Գիտի և ճիշտ է ներկայացնում ուսուցման և ուսումնառության արդյունավետության աստիճանը որոշող տեխնոլոգիաներ:
2. Գիտի և Ճիշտ է բացատրում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման ուղղությունները:
3. Գիտի և Ճիշտ է ներկայացնում համակարգիչը՝ որպես գիտելիքների ստացման միջոց.

4. Գիտի և ճիշտ է ներկայացնում լաբորատոր գործնական աշխատանք՝ համակարգչային մոդելավորման կիրառմամբ,
5. Գիտի և ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիաները՝ որպես ցուցադրման միջոց՝ նոր նյութը բացատրելու ընթացքում.
6. Գիտի և ճիշտ է ներկայացնում անհատական համակարգիչը՝ որպես ինքնակրթության միջոց:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի հիման վրա:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ըստ կատարման չափանիշների լիարժեք կներկայացվի ուսուցման և ուսումնառության արդյունավետության աստիճանը որոշող տեխնոլոգիաները, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման ուղղությունները, կպարզաբանվի անհատական համակարգչի հնարավորությունները՝ որպես ինքնակրթության միջոց:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, համակարգիչներ, տեղեկատվական/հաղորդակցական տեխնիկական այլ միջոցներ, ինտերնետ կապ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 1 ժամ

Գործնական աշխատանք՝ 10 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4.**

Իմանալ ուսուցման մեջ տեխնոլոգիաների ինտեգրման ձևերը:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

Ուսանողը.

1. Ճիշտ է բացատրում տեխնոլոգիաների (որպես ուսումնական առարկա) մուտքը ուսումնական պլան, որն իրականացվում է այլ առարկաների հետ ինտեգրման սկզբունքով:
2. Գիտի և ճիշտ է մեկնաբանում, որ ուսումնական գործընթացի կազմակերպման հիմքերից մեկը միջառարկայական կապերն են, որոնք ամրապնդում և որակական նոր մակարդակ են հաղորդում ուսումնառությանը:
3. Ճիշտ է ներկայացնում աշակերտների կողմից տեխնոլոգիաները՝ գրելու, գրավոր աշխատանքը ստուգելու, փոփոխելու և թղթի վրա տպելու գործունեության մեթոդական ձևերը:
4. Ճիշտ է ներկայացնում աշակերտների կողմից տեխնոլոգիաները տարբեր ուսումնական խնդիրներ լուծելու համար օգտագործելը:
5. Ճիշտ է բացատրում աշակերտների հետ տեխնոլոգիաների միջոցով սեփական աշխատանքը ներկայացնելու, գրանցելու, ուսումնասիրությունների արդյունքները, նկարները, գծագրերը օգտագործելու մեթոդական հնարները:
6. Ճիշտ է բացատրում տեխնոլոգիաների միջոցով աշակերտների ստեղծագործական, քննադատական մտածողությունը զարգացնելու ուղիներն ու միջոցները:
7. Ճիշտ է բացատրում տեխնոլոգիաների միջոցով աշակերտների երևակայական և համագործակցային հմտությունները զարգացնելու ուղիներն ու միջոցները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, գործնական կատարման, անհատական կամ խմբային նախագծերի (պրոյեկտների), ներկայացման (պրեզենտացիաների) հարց ու պատասխանի միջոցով.

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների ճիշտ են ներկայացված գրելու, գրավոր աշխատանքը ստուգելու, փոփոխելու և թղթի վրա տպելու գործունեության մեթոդական ձևերը, տեխնոլոգիաների միջոցով սեփական աշխատանքը ներկայացնելու, գրանցելու, ուսումնասիրությունների արդյունքները, նկարները, գծագրերը օգտագործելու մեթոդական հնարները, տեխնոլոգիաների միջոցով աշակերտների ստեղծագործական, քննադատական մտածողությունը զարգացնելու ուղիներն ու միջոցները:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, համակարգիչներ, տեղեկատվական/հաղորդակցական տեխնիկական այլ միջոցներ, ինտերնետ կապ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք` 1 ժամ

Գործնական աշխատանք` 10 ժամ:

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ` ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

**ՄՈԴՈՒԼԻ ԴՏԴ Կ/Դ 04-09-008**

**ՆՊԱՏԱԿԸ**

Մոդուլի յուրացման նպատակն է ուսանողին օգնել տիրապետելու հոգեկանի զարգացման ընդհանուր օրինաչափություններին, գործընթացներին, որակներին և վիճակներին, որոնք հնարավորություն կտան դպրոցում կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հոգեկան ձևավորման և զարգացման գործընթացը ճիշտ ուղղորդել:

**ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ` 108 ԺԱՄ**

դասախոսություն` 90 ժամ

գործնական պարապմունք` 18 ժամ

**ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Անատոմիա, ֆիզիոլոգիա, հիգիենա և առողջապահության հիմունքներ» մոդուլը:

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. իմանա հոգեբանության դերն ու նշանակությունը, նրա ուսումնասիրման մեթոդները, սկզբունքները, ֆունկցիաները և բնագավառները,
2. իմանա անձին և ճանաչի նրա գործունեության ձևերը,
3. իմանա անձի ճանաչողական /իմացական/ գործընթացները,
4. իմանա անձի գործունեության հուզակամային ոլորտը և հոգեկան վիճակները,
5. իմանա անձի հոգեկան որակները կամ անհատական առանձնահատկությունները,
6. իմանա մանկավարժական հոգեբանության կապը տարիքային հոգեբանության հետ:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1**

Իմանալ հոգեբանության դերն ու նշանակությունը, նրա ուսումնասիրման մեթոդները, սկզբունքները, ֆունկցիաները և բնագավառները:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

Ուսանողը՝

1. ճիշտ է բացատրում հոգեբանությունը որպես գիտություն, նրա զարգացման տարբեր փուլերը:
2. ճիշտ է բացատրում հոգեբանության ուսումնասիրության մեթոդները և որոնք կարողանում է կիրառել անձի հոգեկան կառուցվածքի ուսումնասիրության ժամանակ:
3. ճիշտ է ներկայացնում հոգեբանության սկզբունքները, ֆունկցիաները և հոգեկանի ռեֆլեկտոր բնույթը:
4. ճիշտ է բացատրում հոգեբանության բնագավառները և միջառարկայական կապերը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, գործնական կատարման, հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված կամ եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով: Ուսանողը պետք է լիարժեք ներկայացնի հոգեբանության ուսումնասիրության մեթոդները, կիրառի դրանք երեխայի հոգեկան կառուցվածքի ուսումնասիրության ժամանակ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք` 16 ժամ

Գործնական աշխատանք` 2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2.**

Իմանալ անձին և ճանաչել նրա գործունեության ձևերը

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

Ուսանողը՝

1. ճիշտ է բացատրում անձ, անհատ, անհատականություն և մարդ հասկացությունները և ճանաչում է անձին որպես օբյեկտ և սուբյեկտ:
2. ճիշտ է ներկայացնում անձի գործունեությունը և նրա գործունեության տեսակները տարբեր տարիքային փուլերում:
3. ճիշտ է ներկայացնում տարիքին բնորոշ գործունության առաջատար ձևը /խաղ, աշխատանք, ուսուցում/:
4. ճիշտ է ներկայացնում անձի վարքը, նրա ինքնակառավարման հնարավորությունները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և բավարար ներկայացված են անձի գործունեությունը և նրա գործունեության տեսակները տարբեր տարիքային փուլերում, տարիքին բնորոշ գործունության առաջատար ձևը, անձի վարքը, նրա ինքնակառավարման հնարավորությունները:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք`  18 ժամ

Գործնական աշխատանք`  2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.**

Իմանալ անձի ճանաչողական /իմացական/ գործընթացները

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

Ուսանողը`

1. ճիշտ է ներկայացնում անձի ուշադրությունը, նրա տեսակները, հիմնական որակները , կրտսեր դպրոցականի ուշադրությունը, որպես ճանաչողաիմացական գործընթաց,
2. ճիշտ է ներկայացնում զգայությունը, նրա առանձնահատկությունները, տեսակները, կրտսեր դպրոցականի զգայությունները,
3. ճիշտ է ներկայացնում ընկալումները, նրա տեսակները, առանձնահատկությունները և նրանց իմացական դերը,
4. ճիշտ է ներկայացնում հիշողությունը, նրա տեսակները, հիմնական գործընթացները և կրտսեր դպրոցականի հիշողությունը , որպես ճանաչողաիմացական գործընթաց,
5. ճիշտ է ներկայացնում իմացական գործընթացներից երևակայությունը, նրա տեսակները, կրտսեր դպրոցականի տարիքի երեխաների երևակայական զարգացումը,
6. ճիշտ է ներկայացնում խոսքը որպես հաղորդակցման միջոց, նրա տեսակները և զարգացնել կրտսեր դպրոցական տարիքի երեխաների խոսքը,
7. ճիշտ է բացատրում մտածողությունը, նրա հիմնական գործընթացները և կրտսեր դպրոցականի մտածողությունը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են անձի ուշադրությունը, ընկալումները, ուշադրությունը, զգայությունը, նրանց տեսակները, հիմնական որակները, կրտսեր դպրոցականի ճանաչողաիմացական գործընթացը, նրա առանձնահատկությունները, տեսակները, կրտսեր դպրոցականի զգայությունները, խոսքը որպես հաղորդակցման միջոց:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք` 20 ժամ

Գործնական աշխատանք` 4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4**

Իմանալ ածի գործունեության հուզակամային ոլորտը

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

Ուսանողը`

1. ճիշտ է ներկայացնում անձի հուզակամային ոլորտը և նրանց արտաքին դրսևորումները:
2. ճիշտ է բացատրում հույզերը և զգացմունքները, նրանց տեսակները:
3. ճիշտ է ներկայացնում կամքը, կամային ոլորտի դրսևորումները և հիմնական ֆունկցիաները:
4. ճիշտ է ներկայացնում հոգեկան վիճակներից սթրեսը, ֆրուստրացիան, աֆեկտը, կիրքը և դրանց հնարավոր հոգեբանական խաթարումների նախադրյալները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են անձի հուզակամային ոլորտը և նրանց արտաքին դրսևորումները, հույզերը և զգացմունքները, նրանց տեսակները, կամքը, կամային ոլորտի դրսևորումները և հիմնական ֆունկցիաները, հոգեկան վիճակներից սթրեսը, ֆրուստրացիան, աֆեկտը, կիրքը և դրանց հնարավոր հոգեբանական խաթարումների նախադրյալները:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք` 18 ժամ

Գործնական աշխատանք` 4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5.**

Իմանալ ածի հոգեկան որակները կամ անհատական առանձնահատկությունները:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

Ուսանողը`

1. ճիշտ է ներկայացնում հոգեկան որակներից խառնվածքը նրա հոգեբանական բնութագիրը և նյարդային համակարգին համապատասխան տիպերը:
2. ճիշտ է բացատրում բնավորությունը, նրա դրսևորումները , գծերը և կրտսեր դպրոցականի տարիքի երեխաների բնավորությունը:
3. ճիշտ է ներկայացնում ընդունակությունները, նրանց դրսևորման պայմանները, տեսակները և կրտսեր դպրոցականի ընդունակությունները:
4. ճիշտ է ներկայացնում դիրքորոշումների կառուցվածքը, ֆունկցիաները և տեսակները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, գործնական կատարման, անհատական կամ խմբային նախագծերի (պրոյեկտների), ներկայացման (պրեզենտացիաների) հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված, և անհատական կամ խմբային նախագծերի ներկայացման ժամանակ լիարժեք ներկայացված են խառնվածքը նրա հոգեբանական բնութագիրը և նյարդային համակարգին համապատասխան տիպերը, բնավորությունը, նրա դրսևորումները, գծերը, ընդունակությունները, նրանց դրսևորման պայմանները, տեսակները, դիրքորոշումների կառուցվածքը, ֆունկցիաները և տեսակները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 10 ժամ

Գործնական աշխատանք՝ 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6

Իմանալ մանկավարժական հոգեբանության կապը տարիքային հոգեբանության հետ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ուսանողը՝

1. ճիշտ է բացատրում տարիքային և մանկավարժական հոգեբանությունը, նրա մեթոդներն ու սկզբունքները:
2. ճիշտ է բացատրում տարիքային տարբեր փուլերում գտնվող երեխաների զարգացման հոգեբանական առանձնահատկությունները:
3. ճիշտ է ներկայացնում ուսուցչի մանկավարժական ընդունակությունները, կարողությունները և հմտությունները:
4. ճիշտ է ներկայացնում ուսուցչի անձի ազդեցությունը դպրոցականների անձի ձևավորման վրա:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, հարց ու պատասխանի միջոցով: Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են տարիքային և մանկավարժական հոգեբանությունը, նրա մեթոդներն ու սկզբունքները, տարիքային տարբեր փուլերում գտնվող երեխաների զարգացման հոգեբանական առանձնահատկությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 8 ժամ

Գործնական աշխատանք՝ 2 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ԴՏԴ-04-09-009

ՆՊԱՏԱԿԸ

Մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը կտիրապետի գիտամանկավարժական գիտելիքների, որոնց յուրացումը կապահովի ապագա մասնագետի գործիմացությանը կրթության բնագավառում:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 36 ԺԱՄ

Տեսական պարապմունք՝ 28 ժամ

Գործնական աշխատանք՝ 8 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Այս մոդուլը յուրացնելու համար ուսանողին նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. Իմանա մանկավարժության ուսումնասիրության օբյեկտը, առարկան, խնդիրները և հիմնական հասկացությունները:
2. Իմանա մանկավարժության կապը այլ գիտությունների հետ և մանկավարժական գիտությունների համակարգը:
3. Իմանա մանկավարժության մեթոդոլոգիան, գիտահետազոտական մեթոդները:
4. Իմանա անձի զարգացման օրինաչափությունները, զարգացման վրա ազդող հիմնական գործոնները:
5. Իմանա մանկավարժական գործընթացը և նրա հիմնական փուլերը:
6. Իմանա ՀՀ կրթական համակարգի, կառուցվածքը, սկզբունքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1

Իմանալ մանկավարժության ուսումնասիրության օբյեկտը, առարկան, խնդիրները և հիմնական հասկացությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ուսանողը՝

1. ճիշտ է ներկայացնում մանկավարժության հիմնական առարկան, օբյեկտը, հիմնական խնդիրները հասարակական զարգացման ներկա փուլում,
2. ճիշտ է սահմանում մանկավարժության հիմնական հասկացությունները,
3. ճիշտ է ներկայացնում մանկավարժության որպես գիտություն ծագումն ու զարգացումը,
4. գիտի ժամանակակից մարդու կյանքն ու դաստիարակության առանձնահատկությունները,
5. գիտի մանկավարժության հիմնական հոսանքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են մանկավարժության հիմնական առարկան, օբյեկտը, հիմնական խնդիրները, մանկավարժության հիմնական հասկացությունները, ներկայացնում մանկավարժության որպես գիտություն ծագումն ու զարգացումը, մանկավարժության ժամանակակից հիմնախնդիրները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2**

Իմանա մանկավարժության կապը այլ գիտությունների հետ և մանկավարժական գիտությունների համակարգը:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Ուսանողը՝

1. ճիշտ է բացատրում մանկավարժության կապը հարակից գիտությունների հետ և այդ կապերի ասպեկտները:
2. Գիտի մանկավարժական գիտությունների համակարգը, ճիշտ է ներկայացնում յուրաքանչյուր գիտության ուսումնասիրության առարկան և ուսումնասիրության սահմանները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքը կիհամարվի ձեռքբերված, եթե ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են մանկավարժության կապը հարակից գիտությունների հետ և այդ կապերի ասպեկտները, մանկավարժական գիտությունների համակարգը, դրանց ուսումնասիրության առարկան և ուսումնասիրության սահմանները:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.**

Իմանալ մանկավարժության մեթոդոլոգիան, գիտահետազոտական մեթոդները:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Ուսանողը՝

1. գիտի և ճիշտ է բացատրում մանկավարժության հետազոտության մեթոդոլոգիան,
2. ճիշտ է բացատրում մանկավարժության մեջ օրենքներն ու օրինաչափությունները,
3. գիտի հետազոտության ավանդական մեթոդները, ճիշտ է օգտվում դրանցից մանկավարժական հիմնախնդիրներ լուծելու ընթացքում,
4. ճիշտ է պլանավորում և անցկացնում մանկավարժական գիտափորձը, գիտի առաջ քաշել գիտական վարկած, ապահովել արդյունավետ ընթացք և կատարել արդյունքների վերլուծություն,
5. ճիշտ է օգտվում մանկավարժական գործընթացում թեստավորումից որպես գիտահետազոտական մեթոդ,
6. գիտի խմբային պրոցեսների ուսումնասիրության մեթոդը, ճիշտ է օգտվում հարցումների, անկետավորման, սոցիոմետրիկ, թեստերի մեթոդներից:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է խմբային նախագծերի (պրոյեկտների), ներկայացման (պրեզենտացիաների), հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են հետազոտության ավանդական մեթոդները, դրանցից ճիշտ օգտվելով մանկավարժական հիմնախնդիրներ լուծելու հնարավորությունները, խմբային պրոցեսների ուսումնասիրության մեթոդը, հարցումների, անկետավորման, սոցիոմետրիկ, թեստերի մեթոդներից ճիշտ օգտվելու ձևերը:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, գործնական աշխատանքների համամար մշակված անկետաների, հարցաթերթիկների և պրակտիկայում կիրառվող այլ միջոցների նմուշօրինակներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 2 ժամ

Գործնական աշխատանք՝ 4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4**

Իմանալ անձի զարգացման օրինաչափությունները, զարգացման վրա ազդող հիմնական գործոնները:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Ուսանողը՝

1. գիտի անձի զարգացման և ձևավորման հասկացությունները,
2. գիտի անձի զարգացման օրինաչափությունները,
3. ճիշտ է ներկայացնում ժառանգականության դերը անձի զարգացման գործում,
4. ճիշտ է ներկայացնում սոցիալական միջավայր հասկացությունը մանկավարժության մեջ և բացատրում է դրա ազդեցությունը անձի զարգացման վրա,
5. ճիշտ է ներկայացնում դաստիարակության դերը անձի զարգացման գործում,
6. ճիշտ է ներկայացնում է գործունեության տեսակները և անձի ակտիվ գործունեության դերը զարգացման գործում,
7. գիտի երեխայի զարգացման շրջանաբաժանումները և երեխայի տարիքային առանձնահատկությունները, ճիշտ է ներկայացնում դրանց մանկավարժահոգեբանական բնութագրերը,
8. գիտի երեխայի անհատական առանձնահատկությունները և դրանց հաշվառումը ուսուցման և դաստիարակության ընթացքում:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, գործնական կատարման, անհատական կամ խմբային նախագծերի (պրոյեկտների), ներկայացման (պրեզենտացիաների) հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են ժառանգականության դերը անձի զարգացման գործում, սոցիալական միջավայր հասկացությունը մանկավարժության մեջ, դրա ազդեցությունը անձի զարգացման վրա, դաստիարակության դերը անձի զարգացման գործում, երեխայի զարգացման շրջանաբաժանումները և երեխայի տարիքային առանձնահատկությունները

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, գծապատկերներ, աղյուսակներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք` 8 ժամ

Գործնական աշխատանք` 2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5**

Իմանալ մանկավարժական գործընթացը և նրա հիմնական փուլերը:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Ուսանողը`

1. ճիշտ է ներկայացնում մանկավարժական գործընթացը որպես ամբողջական գործընթաց,
2. գիտի մանկավարժական գործընթացի օրինաչափությունները,
3. գիտի մանկավարժական գործընթացի հիմնական փուլերը,
4. ճիշտ է ներկայացնում նորարարական մանկավարժության էությունը և առանձնահատկությունները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են մանկավարժական գործընթացը որպես ամբողջական գործընթաց, օրինաչափությունները, հիմնական փուլերը, նորարարական մանկավարժության էությունը և առանձնահատկությունները:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք` 8 ժամ

Գործնական աշխատանք` 2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 6**

Իմանալ ՀՀ կրթական համակարգի կառուցվածքը, սկզբունքները:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Ուսանողը`

1. ճիշտ է ներկայացնում ՀՀ կրթական համակարգի էությունը և կառուցվածքը,
2. ճիշտ է ներկայացնում կրթական համակարգի զարգացման միտումները,
3. ճիշտ է ներկայացնում ՀՀ կրթական համակարգի զարգացման սկզբունքները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է ներկայացման (պրեզենտացիաների) հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են ՀՀ կրթական համակարգի էությունը և կառուցվածքը, զարգացման միտումները, զարգացման սկզբունքները

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 4 ժամ:

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ**

**ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ԴՏԴ-04-09-010**

**ՆՊԱՏԱԿԸ**

Մոդուլը մշակվել է ուսանողներին հայ և համաշխարհային մանկագրության, բանահյուսության դասական նմուշներին ծանոթացնելու այդ նմուշները սաների զարգացման գործընթացում օգտագործելու հմտություններ ձևավորելու, ուսանողների լեզվազգացողության և լեզվամտածողության կատարելագործման նպատակներով:

**ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 144 ժամ**

Տեսական պարապմունք՝ 46 ժամ

Գործնական աշխատանք՝ 98 ժամ:

**ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ**

Մոդուլը ուսումնասիրելու համար մուտքային հմտություններ և գիտելիքներ չեն պահանջվում:

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Մոդուլի յուրացման արդյունքում ուսանողը պետք է՝

1. իմանա հայ և համաշխարհային մանկագրության, բանահյուսության դասական նմուշները և դրանցից անգիր իմանա այդ նպատակով առաջարկվող նյութերը,
2. կարողանա հայ և համաշխարհային մանկագրության, բանահյուսության դասական նմուշներով ուսումնական նյութեր ստեղծել, դրանք օգտագործել երեխայի գործունեությունը կազմակերպելիս,
3. կարողանա մանկական ստեղծագործությամբ աշխատելու նախագիծ կազմել, իրականացնել և ներկայացնել արդյունքները,
4. տիրապետի ստեղծագործական երևակայությունը զարգացնող հնարքներին և կարողանա դրանք կիրառել մանկական ստեղծագործություններով աշխատելիս,
5. կարողանա ծեսի իրականացման աշխատանքային նախագիծ կազմել և իրականացնել:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1**

Իմանալ հայ և համաշխարհային մանկագրության, բանահյուսության դասական նմուշները և դրանցից անգիր իմանալ այդ նպատակով առաջարկվող նյութերը:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

Ուսանողը.

1. Գիտի հայ և համաշխարհային մանկագրության դասականներին և նրանց առավել հայտնի ստեղծագործությունները, անգիր գիտի այդ նպատակով առանձնացված ստեղծագործությունները,
2. գիտի հայ ժողովրդական բանահյուսության ծիսական, մանկական ստեղծագործությունները (հաշվերգեր խաղերգեր, հեքիաթներ, ոտանավորներ, հանելուկներ, շուտասելուկներ, առած-ասացվածքներ, ծիսական ասույթներ, խաղիկներ և այլն) անգիր գիտի այդ նպատակով առանձնացված նմուշները,

3. ճիշտ է կարողանում ստեղծագործությունը տարբեր հնարքներով ներկայացնել լսարանին:

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվեն հայ և համաշխարհային մանկագրության, բանահյուսության դասական նմուշներ: Նա պետք է կարդա, վերլուծի այդ ստեղծագործությունները, անգիր անելով այն մասերը, որոնք դասախոսը առանձնացրել է: Ուսանողին կմատուցվի նաև այն հնարքները, որոնք անհրաժեշտ են հայ ժողովրդական բանահյուսության ծիսական, մանկական ստեղծագործությունները (հաշվերգեր խաղերգեր, հեքիաթներ, ոտանավորներ, հանելուկներ, շուտասելուկներ, առած-ասացվածքներ, ծիսական ասույթներ, խաղիկներ և այլն) լսարանին ներկայացնելու համար:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը գիտի հայ և համաշխարհային մանկագրության դասականներին և նրանց առավել հայտնի ստեղծագործությունները, անգիր գիտի այդ նպատակով առանձնացված ստեղծագործությունները և կարող է դրանք տարբեր հնարքներով ներկայացնել լսարանին: Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է ուսանողի կողմից հանձնարարված ստեղծագործությունները տարբեր հնարքներով լսարանին ներկայացնելու միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը կարողանում է ստեղծագործությունների առանձին հատվածներից ճանաչել այդ ստեղծագործությունների անվանումները և հեղինակներին, անգիր գիտի առնվազն 10 նմուշ և կարող է դրանք մանկավարժական տարբեր հնարքներով ներկայացնել լսարանին:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական, գործնական և ինքնուրույն պարապմունքների ձևով, նպատակ ունենալով ուսանողների մոտ զարգացնելու ստեղծագործական մտածողություն, խոսքը կառուցելու ազատություն ու անկաշկանդություն: Կարևոր է հաշվի առնել ուսանողի նախասիրությունները և հնարավորություն տալ նրան ինքնուրույն ընտրելու այն ստեղծագործությունները, որոնք պետք է անգիր սովորի: Անհրաժեշտ է համապատասխան մասնագիտական և մանկական գրականություն, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ:

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 18 ժամ

Գործնական աշխատանք՝ 30 ժամ

## ԱՐԴՅՈՒՆՔ 2.

Կարողանալ մանկական գրականության նմուշներով ուսումնական նյութ ստեղծել և օգտագործել երեխայի գործունեությունը կազմակերպելիս:

## ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ուսանողը կարողանում է՝

1. կազմել առաջադրանքների և անհրաժեշտ մեթոդների կիրառման համակարգ՝ ընտրված ստեղծագործությամբ աշխատելու և այն ամբողջապես յուրացնելու համար,
2. ուսումնական նպատակներով մշակել անհրաժեշտ ստեղծագործությունը,
3. մանկական գրականության յուրացման ընթացքում կարողանում է ինտեգրել գործունեության տարբեր տեսակներ,
4. մանկական գրականությամբ աշխատելու արդյունքում նոր նյութեր ստեղծել:

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կհանձնարարվեն հայ և համաշխարհային մանկագրության, բանահյուսության դասական ստեղծագործություններ: Նրան պետք է ուսուցանվեն նաև այն մեթոդներն ու հնարքները,

որոնց հիման վրա կարելի կլինի մշակել ստեղծագործությունների նմուշները, դրանց հիման վրա ստեղծելով նոր նյութեր:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է մանկական գրականության նմուշներով ուսումնական նյութ ստեղծել և օգտագործել դա լսարանում իր ընկերներին ներկայացնելու համար: Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է ուսանողի կողմից հանձնարարված ստեղծագործությունները տարբեր հնարքներով լսարանին ներկայացնելու միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը կարողանում է առանձին ստեղծագործություններ վերամշակել որպես ուսումնական նյութ և ներկայացնել այն լսարանին:

### ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական, գործնական և ինքնուրույն պարապմունքների ձևով, նպատակ ունենալով ուսանողների մոտ զարգացնելու ստեղծագործական մտածողություն, խոսքը կառուցելու ազատություն ու անկաշկանդություն: Կարևոր է հաշվի առնել ուսանողի նախասիրությունները և հնարավորություն տալ նրան ինքնուրույն ընտրելու այն ստեղծագործությունները, որոնք պետք է մշակի: Անհրաժեշտ է համապատասխան մասնագիտական և մանկական գրականություն, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ:

### ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 8 ժամ

Գործնական աշխատանք՝ 20 ժամ

### ԱՐԴՅՈՒՆՔ 3.

Մանկական ստեղծագործությամբ աշխատելու նախագիծ կազմել, իրականացնել և ներկայացնել արդյունքները:

### ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ուսանողը մանկական ցանկացած ստեղծագործությամբ աշխատելու (ուսուցանելու) նախագիծ է կազմում՝

1. նախանշելով իր աշխատանքի
   - խնդիրները,
   - քայլերը,
   - իրականացվելիք մեթոդները,
   - գործունեության այլ ձևերի ինտեգրումը,
   - ճամփորդություններ- էքսկուրսիաները
   - վերջնական արդյունքները
2. ներկայացման ձևերը՝
   - ցուցադրություններ
   - փաթեթներ,
   - ներկայացումներ,
   - տոնակատարություններ,
   - հրատարակումներ
   - հաշվետվություններ
   - թերթերի, գրքույկների ստեղծում

### ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կհանձնարարվի գտնել որևէ մանկական ստեղծագործություն, որի հիման վրա պետք է մշակվի համապատասխան նախագիծ՝ ըստ կատարման չափանիշների պահանջների:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է մանկական գրականության որևէ նմուշի հիման վրա կազմել նախագիծ, որի հիման վրա կարելի է կազմակերպել ուսուցման գործընթաց և ներկայացնում այն իրեն հանձնարարված ձևով:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է ուսանողի կողմից մշակված նախագծի և նրա ներկայացման ձևի հիման վրա: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը կարողանում է առանց սխալների վերամշակել մանկական ստեղծագործությունը և ընտրել դրան համապատասխան ներկայացման ձևը:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական, գործնական և ինքնուրույն պարապմունքների ձևով, նպատակ ունենալով ուսանողների մոտ զարգացնելու ստեղծագործական կարողություն և հմտություն: Կարևոր է հաշվի առնել ուսանողի նախասիրությունները և հնարավորություն տալ նրան ինքնուրույն ընտրելու այն ստեղծագործությունները, որոնք պետք է մշակի: Անհրաժեշտ է համապատասխան մասնագիտական և մանկական գրականություն, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, իսկ ներկայացման ձևից կախված՝ նաև համակարգչային տեխնիկա, լրացուցիչ գրենական պիտույքներ ու հարմարանքներ՝ պինդվանդ, ֆլիպչարտ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 8 ժամ

Գործնական աշխատանք՝ 16 ժամ:

**ԱՐԴՅՈՒՆՔ 4**

Տիրապետել ստեղծագործական երևակայությունը զարգացնող հնարքներին և կարողանալ դրանք կիրառել:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

Ուսանողը՝

1. տիրապետում է ստեղծագործական երևակայությունը զարգացնող հնարքներին և ուսման ընթացքում այդ մեթոդներով աշխատանքներ է կատարում:
   - Ի՞նչ եղավ հետո՝ ստեղծագործության շարունակում
   - Ի՞նչ կլինի, եթե ստեղծագործության ավարտի փոփոխում
   - Ինչո՞ւ տերևը ծառ ունի՝ քարս հարցեր՝ քարս պատասխաններով
   - Հեքիաթների աղցան կամ շիլաշփոթ
   - Ապակե մարդը՝ հեքիաթի հորինում որևէ առարկայի մասին՝ հաշվի առնելով այդ առարկայի առանձնահատկությունները
   - Ստեղծագործական երևակայության երկանդամ,
2. տիրապետում է գրական ստեղծագործություններով տարբեր խաղերի կազմակերպման, դրանց ստեղծման մեթոդներին ու հնարքներին և կիրառում է դրանք մասնագիտական փործառության ժամանակ:
3. համատեղում է գրականությունն ու գեղարվեստական գործունեության մյուս ձևերը՝ կերպարվեստ, երաժշտություն, թատրոն, տեխնոլոգիա:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կտրվեն մի քանի անավարտ ստեղծագործություններ, որոնք նա պետք է հասցնի իր տրամաբանական ավարտին: Ուսանողին կուսուցանվեն նաև այնպիսի մեթոդներ, որոնք նպաստում են ստեղծագործական երևակայության զարգացմանը և այդ մեթոդների գործնական կիրառման եղանակները: Ուսանողին կտրվեն նաև այնպիսի ստեղծագործություններ, որոնց միջոցով նա պետք է կազմակերպի խաղեր՝ համադրելով գեղարվեստական գործունեության մյուս ձևերը՝ կերպարվեստ, երաժշտություն, թատրոն, տեխնոլոգիա:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է իրեն հանձնարարված անավարտ ստեղծագործությունները հասցնել իրենց տրամաբանական ավարտին՝ օգտագործելով տարբեր մեթոդներ և գեղարվեստական հնարքներ, ինչպես նաև դրանց հիման վրա հաջողությամբ կազմակերպում է խաղեր:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է ուսանողի կողմից ավարտին հասցված որևէ ստեղծագործության և դրա հիման վրա կազմակերպված դերային խաղի հիման վրա: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը կարողանում է իրեն անծանոթ որևէ ստեղծագործություն հասցնել իր տրամաբանական ավարտին, ապա այդ ստեղծագործության հիման վրա կազմակերպում է խաղ և կիրառում այն մասնագիտական փործառության ժամանակ:

### ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական, գործնական և ինքնուրույն պարապմունքների ձևով, նպատակ ունենալով ուսանողների մոտ զարգացնելու ստեղծագործական երևակայության կարողություն և հմտություն: Անհրաժեշտ է համապատասխան մասնագիտական և մանկական գրականություն, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, իսկ ներկայացման ձևից կախված՝ նաև երաժշտական գործիքներ, տեխնիկական միջոցներ, այլն:

### ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 8 ժամ

Գործնական աշխատանք՝ 16 ժամ

### ԱՐԴՅՈՒՆՔ 5.

Կարողանալ ծեսի իրականացման աշխատանքային նախագիծ կազմել և իրականացնել:

### ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ուսանողը՝

1. Գիտի հայ բանահյուսության ժանրերը և դրանց առանձնահատկությունները:
2. Գիտի հայ բանահյուսության դասական նմուշները՝ ազգային առասպելներ, հեթանոս երգեր, աշխատանքային ու այլ երգեր, ավանդություններ և այլն:
3. Գիտի ազգային հայտնի ծեսերը (Ամանոր, Տրնդեզ, Բարեկենդան, Զատիկ, Ծառզարդար, Համբարձում, Վարդավառ…) և ծիսական արարողությունները, ծիսական պարագաները, երգերը, ծեսերի առանձնահատկությունները
4. Անգիր գիտի ծիսական ասույթները, ասերգերը, ծեսի հետ կապված ժողովրդական այլ ստեղծագործություններ
5. Կազմում է ծեսի իրականացման աշխատանքային նախագիծ, ծիսակատարության սցենար և իրականացնում այն:

### ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կհանձնարարվի ուսումնասիրել հայ բանահյուսության ժանրերը, հայ բանահյուսության դասական նմուշները, ազգային հայտնի ծեսերը, որոնց հիման վրա վրա պետք է մշակվի համապատասխան նախագիծ՝ ըստ կատարման չափանիշների պահանջների:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է որևէ հայ բանահյուսության ժանրի, հայ բանահյուսության դասական նմուշի կամ ազգային հայտնի ծեսի հիմքի վրա կազմել նախագիծ, որի հիման վրա կարելի է իրականացնել այդ միջոցառումը և ինքն էլ մասնակցում է այդ միջոցառմանւ որպես գործող անձ:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է ուսանողի կողմից մշակված նախագծի կամ ծիսակատարության սցենարի և նրա ներկայացման ձևի ու մասնակցության հիման վրա: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը կարողանում է առանց սխալների բեմականացնել կամ իրականացնել որևէ ազգային ծես և կարող է անգիր ներկայացնել ծիսական ասույթները, աներգերը, ծեսի հետ կապված ժողովրդական այլ ստեղծագործություններ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական, գործնական և ինքնուրույն պարապմունքների ձևով, նպատակ ունենալով ուսանողների մոտ զարգացնելու ստեղծագործական մտածողության կարողություն և հմտություն: Անհրաժեշտ է համապատասխան գրականություն, մեթոդական ձեռնարկներ, իսկ ներկայացման ձևից կախված՝ նաև ծիսական կամ ազգային հագուստներ, երաժշտական գործիքներ, համակարգչային տեխնիկա, տեխնիկական միջոցներ և այլն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 4 ժամ

Գործնական աշխատանք՝ 16 ժամ

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԴԱՍ ԹԱՏՐՈՆ**

**ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ԴՏԴ 04-09-011**

**ՆՊԱՏԱԿԸ**

Այս մոդուլի նպատակը «Թատրոնը» տարրական դասարանների ապագա ուսուցիչների համար որպես մեթոդական բազա մատուցելն է, այն որպես ուսուցման/դասավանդման նոր արդյունավետ միջոցներ յուրացնելը: Ապագա մասնագետները «Թատրոնը» որպես ուսումնական առարկա դիտարկելով՝ հնարավորություն կստանան բացահայտելու.

ա) ուսուցիչ-աշակերտ փոխըմբռնման, կապի, շփման նոր միջոց,

բ) խաղով հաղորդակցման բարենպաստ և ստեղծագործ մթնոլորտ ստեղծելու միջոց,

գ) բովանդակության՝ դասավանդվող նյութի դյուրամատչելիթությունն ապահովելու միջոց,

դ) կրթության, դաստիարակության և զարգացման նոր ձև և միջոց:

Կրտսեր դպրոցում «Թատրոն» մոդուլի միջոցով ուսուցման ու դաստիարակության ավանդական կանոնակարգին զուգահեռ կրթական ողջ դասընթացը տեսականորեն և գործնականորեն ուսումնական խաղով հագեցնելն է, դասընթաց-ներկայացում ձևավորելը:

**ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 72 ժամ**

Տեսական պարապմունք՝ 12 ժամ

Գործնական աշխատանք՝ 60 ժամ

**ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

Այս մոդուլի յուրացման համար անհրաժեշտ է «Հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն», «Շարահյուսություն և ոճաբանություն», «Խոսքի զարգացում», «Գրականություն», «Մանկական գրականություն և ժողովրդական բանահյուսություն», «Հոգեբանություն», «Մանկավարժություն» մոդուլների նախնական ուսումնասիրություն:

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Տվյալ մոդուլն ուսումնասիրելու արդյունքում ուսանողը պետք է.

1. Իմանա «Թատրոնի» ուսումնական-մեթոդական ուղղվածությունն ու հնարավորությունները:
2. Իմանա «Թատրոնի» հոգեբանամանկավարժական ներգործությունը ուսուման/ուսումնառության գործընթացի և նրա արդյունավետության բարձրացման վրա:
3. Իմանա «Թատրոնին» բնորոշ ուսումնական գործունեության ձևերը որպես դասավանդման միջոցներ, մեթոդներ և մեթոդական հնարներ
4. Իմանա «Թատրոնին» բնորոշ գործունեության ձևեր և դրանք կիրառի ուսումնադաստիարակչական և մանկավարժական նպատակներով.

5. Իմանա և օգտագործի «Թատրոնի» կամ բեմարվեստի պարզագույն վարժություններ, որպես ուսուցիչ, սեփական խոսքի, կեցվածքի, արտիստիզմի և մանկավարժական վարպետության ձևավորման համար:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1

Իմանալ «Թատրոնի»՝ որպես ուսումնական առարկայի ուսումնական-մեթոդական ուղղվածությունն ու հնարավորությունները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ուսանողը՝

1. Ճիշտ է ներկայացնում դասավանդման կերպն ու խնդիրները «Թատրոնի» հնարավորությունների տեսանկյունից:
2. Ճիշտ և հստակ մատնանշում է ավանդական, միայն գիտելիքների վրա հիմնված ուսուցման և նոր ամենօրյա ազատ, ստեղծագործ միտքը, երևակայությունը զարգացնող գործունեությամբ հագեցած ուսումնառության առանձնահատկությունները:
3. Ճիշտ է կարողանում համեմատել պարտադրվող գիտելիքներ յուրացնող երեխայի ուսումնական գործունեությունը, արկած-ներկայացումներով հարուստ միջավայրում արարողը, գործող աշակերտի կրթության և դաստիարակության հետ: Ցույց է տալիս դրանց առանձնահատկությունները:
4. Ճիշտ է երկայացնում «Թատրոնի» միջոցներով կազմակերպվող դասի խաղարկային բնույթը: Խաղի կազմակերպումը փակ տարածությունից (դասասենյակ, հեքիաթի սենյակ, դահլիճ) պարբերաբար բաց տարածություն (բակ, խաղահրապարակ) տեղափոխելը:
5. Ճիշտ է արժևորում և ներկայացնում դասավանդման թաքերականացված կերպն ու գեղարվեստական որակը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման, հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված է դասավանդման կերպն ու խնդիրները «Թատրոնի» հնարավորությունների տեսանկյունից, «Թատրոնի» միջոցներով կազմակերպվող դասի խաղարկային բնույթը, դասավանդման թաքերականացված կերպն ու գեղարվեստական որակը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 2 ժամ

Գործնական աշխատանք՝ 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2

Իմանալ «Թատրոնի» հոգեբանամանկավարժական ներգործությունը ուսուցման/ուսումնառության գործընթացի և նրա արդյունավետության բարձրացման վրա:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ուսանողը՝

1. Ճիշտ է բացատրում և հիմնավորում անվտանգ ու անկաշկանդ և տրամադրող միջավայրի հնարավորությունները ուսման արդյունավետությունը բարձրացնելու, լիարժեք ընկալում և ինքնադրսևորում ապահովելու համար:
2. Ճիշտ է բացատրում այն ուղին, որ թատրոնը, խաղը և առհասարակ ստեղծագործության ակունքն ու ազդակը հենց ինքը երեխան է՝ այն շտեմարանը, որից առատորեն պիտի օգտվի ուսուցիչը, որտեղից պիտի գոյանա վարվեցողության, հաղորդակցման ու արտահայտչամիջոցների ողջ զինանոցը:
3. Ճիշտ է ներկայացնում ուսման մեջ հանուն ընդհանուր նպատակի գործելու, փոխօգնության, աջակցության, խմբերի համագործակցության կրթական արժեքը:
4. Ճիշտ է բացատրում այն մեխանիզմը, որ երեխան դիմակով, երբ «վարագույրը» բաց է, և «ներկայացումն» սկսված է, դեպքում երեխան դիմակով ավելի պակաս խոցելի է: Նա համարձակ ու նախաձեռնող է և, որ ամենակարևորն է, «պաշտպանն է իր դիմակի»: Եվ սովորելն ու գիտելիքներ ձեռք բերելը պարտադրանք չեն թվում այս պահին:
5. Տիրապետում է լռությունը, կենտրոնացումն ու լսելու կարողությունը զարգացնելու, վախի, տագնապի զգացողությունը հաղթահարելու, բարդույթներն անտեսելու վարժությունների:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման, անհատական կամ խմբային նախագծերի (պրոյեկտների), ներկայացման (պրեզենտացիաների) հարց ու պատասխանի միջոցով.

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված է հանուն ընդհանուր նպատակի գործելու, փոխօգնության, աջակցության, խմբերի համագործակցության կրթական արժեքն ու մեթոդները, լսելու կարողությունը զարգացնելու, վախի, տագնապի զգացողությունը հաղթահարելու, բարդույթներն անտեսելու վարժությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 2 ժամ

Գործնական աշխատանք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3

Իմանալ «Թատրոնին» բնորոշ ուսումնական գործունեության ձևերը որպես դասավանդման միջոցներ, մեթոդներ և մեթոդական հնարներ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ուսանողը.

1. Ճիշտ է ներկայացնում նյութի բեմականացման և այն խաղով մատուցելու՝ դասը խաղի վերածելու ձևեր, միջոցներ, մեթոդներ:
2. Ճիշտ օրինակներ է բերում, թե երբ է թատրոնի դասը ծառայեցվում նորանոր արտահայտչամիջոցների ձեռքբերման ու մշակման նպատակին՝ որպես փորձաժամ:
3. Ճիշտ է կարողանում ընկալել համապատասխան միջավայրն ու մթնոլորտը և պատրաստ է ուսուցման համապատասխան գործընթաց կազմակերպել:

- բանավոր և գրավոր խոսքի հղկում, մշակում,
- կերպավորում, կերպարի վերլուծություն,
- երևակայական և ստեղծագործական մտածողության զարգացում:

### ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման, անհատական կամ խմբային նախագծերի (պրոյեկտների), ներկայացման (պրեզենտացիաների) հարց ու պատասխանի միջոցով.

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են նյութի բեմականացման և այն խաղով մատուցելու՝ դասը խաղի վերածելու ձևեր, միջոցներ, մեթոդներ, կերպարավորման, կերպարի վերլուծության, երևակայական և ստեղծագործական մտածողության զարգացման մեթոդական ձևեր և հնարներ:

### ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

### ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 4 ժամ

Գործնական աշխատանք՝ 20 ժամ

### ԱՐԴՅՈՒՆՔ 4

Իմանալ «Թատրոնին» բնորոշ գործունեության ձևեր և դրանք կիրառել ուսումնադաստիարակչական և մանկավարժական նպատակներով.

### ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ուսանողը.

1. Գիտի բարձրարժեք մանկական գրական ստեղծագործություններ մշակել և նախապատրաստել բեմադրման (այդ թվում՝ասացվածք, հանելուկ, բանաստեղծություն, երկխոսություն և այլն).
    - իրենց՝ երեխաների կողմից հորինված պատմությունների կերպավորում,
    - մանկական տոնախմբությունների կազմակերպում երեխաների ստեղծագործական մասնակցությամբ:
2. Ժողովրդական ծեսերի, ավանդատոների կազմակերպում երեխաների գործուն մասնակցությամբ:
3. Ճիշտ է բացատրում իրենց՝ երեխաների կողմից հորինված պատմությունների կերպավորումը:
4. Ճիշտ է նկարագրում մանկական տոնախմբությունների կազմակերպումը երեխաների գործուն մասնակցությամբ:
5. Ճիշտ է մեկնաբանում ժողովրդական ծեսերի, ավանդատոների կազմակերպումը երեխաների գործուն մասնակցությամբ:
6. Ճիշտ է կարողանում խաղը, տոնը դիտարկել որպես ուսումնական գործընթաց՝մատնանշելով դրանց կրթական փաստացի արժեքները:
7. Ճիշտ է բացատրում երևակայության խթանման կարևորությունն ու ներկայացնում դրա զարգացմանն ուղղված պարզագույն ձևեր.
    - լսել լռությունը,
    - լսել և արտաբերել գույների ձայները,

- խոսել թվերի բնավորության մասին:

8. Ճիշտ է կարողանում ցույց տալ, թե ինչպես կարելի է օգտագործել երեխաների տեսած-լսածը, ապրած-զգացածն ու վերապրածը ուսուցման գործընթացում:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման, անհատական կամ խմբային նախագծերի (պրոյեկտների), ներկայացման (պրեզենտացիաների) հարց ու պատասխանի միջոցով.

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են բարձրարժեք մանկական գրական ստեղծագործությունների մշակումը, նախապատրաստումը, բեմադրումը (ասացվածք, հանելուկ, բանաստեղծություն, երկխոսություն և այլն), երեխաների կողմից հորինված պատմությունների կերպավորումը, մանկական տոնախմբությունների, ժողովրդական ծեսերի, ավանդատոների կազմակերպումը երեխաների ստեղծագործական մասնակցությամբ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 2 ժամ

Գործնական աշխատանք՝ 18 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5.**

Իմանա և օգտագործի «Թատրոնի» կամ բեմարվեստի պարզագույն վարժություններ որպես ուսուցիչ, սեփական խոսքի, կեցվածքի, արտիստիզմի և մանկավարժական վարպետության ձևավորման համար:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

Ուսանողը.

1. Ճիշտ է կարողանում վերահսկել ձայնի բարձրությունը, հնչողությունը:
2. Ճիշտ է կարողանում խոսքին հաղորդել արտահայտչականություն, հստակ արտասանություն և ընկալելի ծավալ:
3. Ճիշտ է կարողանում վերահսկել շարժումներն ու ժեստերը, բարյացկամ և վստահություն ներշնչող դիմախաղը:
4. Ճշգրիտ մեկնաբանում է անձնական օրինակի դաստիարակչական ազդեցությունը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման՝ ներկայացման ձևով:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ըստ կատարման չափանիշների գործողությունները ճիշտ են կատարված. լիարժեք ներկայացված են ձայնի բարձրությունը, հնչողությունը, շարժումներն ու ժեստերը, բարյացկամ և վստահություն ներշնչող դիմախաղը վերահսկելու կարողությունները:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

**ՈւՍՈւՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 2 ժամ

Գործնական աշխատանք՝ 12 ժամ:

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ**

**ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ԴՏԴ - 04-09-012**

**ՆՊԱՏԱԿԸ**

Մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը կտիրապետի մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների, որոնք անհրաժեշտ են կրտսեր դպրոցի մանկավարժական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար

**ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 144 ժամ**

Տեսական պարապմունք՝ 82 ժամ

Գործնական աշխատանք՝ 62 ժամ

**ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

Այս մոդուլը յուրացնելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի «Մանկավարժություն» մոդուլը:

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. Իմանա կրտսեր դպրոցի ուսուցչի մանկավարժական գործունեության առանձնահատկությունները, կրտսեր դպրոցի մանկավարժական գործընթացի գործառույթները և տեխնոլոգիաները:
2. Իմանա կրտսեր դպրոցի կրթության բովանդակությունն ու այն արտահայտող հիմնական փաստաթղթերը, կրտսեր դպրոցի ուսուցման գործընթացում կիրառվող ուսուցման մեթոդները, դրանց դասակարգումը, մեթոդների բազմազանությունը և դրանց օպտիմալ զուգակցման հնարավորությունները:
3. Իմանա կրտսեր դպրոցական տարիքի աշակերտների ուսուցման կազմակերպման, դասավանդման, գնահատման առանձնահատկությունները, դիագնոստիկան, կրտսեր դպրոցի ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները:
4. Իմանա կրտսեր դպրոցականի դաստիարակության գործընթացի առանձնահատկությունները, բովանդակությունը մեթոդիկաները, բաղադրիչները, դաստիարակվածության դիագնոստիկան, կրտսեր դպրոցականների ծնողների հետ տարվող աշխատանքների մեթոդներն ու ձևերը:
5. Իմանա երեխայի անձի սոցիալականացման խնդիրները տարրական կրթության համակարգում, այս տարիքի հետ տարվող սոցիալ- մանկավարժական աշխատանքի բովանդակությունը, տեսակներն ու ձևերը:
6. Իմանա դաստիարակության և սկզբնական կրթության պատմությունը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

Մոդուլի ընդունելի կատարողականը գնահատվելու է սահմանված յուրաքանչյուր արդյունքի համար չափանիշների բավարար մակարդակի ապահովման դեպքում:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1.**

Իմանալ կրտսեր դպրոցի ուսուցչի մանկավարժական գործունեության առանձնահատկությունները, կրտսեր դպրոցի մանկավարժական գործընթացի գործառույթները և տեխնոլոգիաները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. ճիշտ է ներկայացնում կրտսեր դպրոցի մանկավարժությունը որպես գիտություն կրտսեր դպրոցականի դաստիարակության, կրթության և զարգացման մասին,
2. ճիշտ է ներկայացնում կրտսեր դպրոցի մանկավարժական գործընթացը որպես ամբողջական գործընթաց, նրա կառուցվածքն ու փուլերը,
3. ճիշտ է ներկայացնում կրտսեր դպրոցականի զարգացման օրինաչափությունները, գործոնները, գիտի առանձնահատկությունները,
4. գիտի և ճիշտ է ներկայացնում կրտսեր դպրոցի ուսուցչի մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները,
5. գիտի կրտսեր դպրոցի մանկավարժական գործընթացի ժամանակակից հայեցակարգերը և տեխնոլոգիաները, մանկավարժական գործընթացի գործառույթները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, գործնական կատարման, հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են կրտսեր դպրոցի մանկավարժական գործընթացը որպես ամբողջական գործընթաց, նրա կառուցվածքն ու փուլերը, կրտսեր դպրոցականի զարգացման օրինաչափությունները, գործոնները, գիտի առանձնահատկությունները, դպրոցի մանկավարժական գործընթացի ժամանակակից հայեցակարգերը և տեխնոլոգիաները, մանկավարժական գործընթացի գործառույթները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք` 8 ժամ

Գործնական աշխատանք` 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2.

Իմանա կրտսեր դպրոցի կրթության բովանդակությունն ու այն արտահայտող հիմնական փաստաթղթերը, կրտսեր դպրոցի ուսուցման գործընթացում կիրառվող ուսուցման մեթոդները, դրանց դասակարգումը, մեթոդների բազմազանությունը և դրանց օպտիմալ զուգակցման հնարավորությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ուսանողը`

1. գիտի և ճիշտ է ներկայացնում կրտսեր դպրոցի կրթության բովանդակությունը, նրա հիմնական տարրերը,
2. ճիշտ է ներկայացնում կրթության բովանդակության հիմնական փաստաթղթերը, ճիշտ է օգտվում կրտսեր դպրոցի պետական կրթական չափորոշիչներից, ուսումնական պլաններից, ծրագրերից, դասագրքերից և ուսումնական ձեռնարկներից;
3. գիտի կրտսեր դպրոցում կիրառվող ուսուցման մեթոդների դասակարգումը և ճիշտ է կիրառում դրանք ուսուցման գործընթացում;
4. գիտի և ճիշտ է ներկայացնում ուսուցման մեթոդների բազմազանությունը և դրանց օպտիմալ զուգակցման հնարավորությունները;

5. կարողանում է կիրառել ուսուցման մեթոդը որպես ուսումնական նյութի տեսական և գործնական յուրացման ձև:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, գործնական կատարման, դասերի վարման, հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են կրտսեր դպրոցի կրթության բովանդակությունը, նրա հիմնական տարրերը, կրթության բովանդակության հիմնական փաստաթղթերը, կրթական չափորոշիչներից, ուսումնական պլաններից, ծրագրերից, դասագրքերից և ուսումնական ձեռնարկներից օգտվելու կարողություններ, ուսուցման մեթոդների բազմազանությունը, դրանց օպտիմալ զուգակցման հնարավորությունները:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, կրթական բովանդակությանը վերաբերվող փաստաթղթեր:

**ՈւՍՈւՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 16 ժամ

Գործնական աշխատանք՝ 6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.**

Իմանալ կրտսեր դպրոցական տարիքի աշակերտների ուսուցման կազմակերպման, գնահատման առանձնահատկությունները, դիագնոստիկան, կրտսեր դպրոցի ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Ուսանողը՝

1. գիտի ներկայացնում տարրական դասարանների ուսուցման կազմակերպման ձևերը, դրանց տարբերակումն ու ինտեգրումը;
2. ճիշտ է ներկայացնում դաս-դասարանային համակարգը որպես ուսուցման կազմակերպման հիմնական, գիտի դասերի տիպերը և դրանց կառուցման առանձնահատկությունները կրտսեր դպրոցում;
3. ճիշտ է ներկայացնում դասերին ներկայացվող մանկավարժական և դիդակտիկական պահանջները;
4. ճիշտ է ներկայացնում կրտսեր դպրոցականի գիտելիքների, կարողությունների, հմտությունների ստուգման և գնահատման կրթական, դաստիարակչական և զարգացնող գործառույթները, գիտի կրտսեր դպրոցի գնահատման սկզբունքներն ու դրան ներկայացվող մանկավարժական պահանջները;
5. գիտի կրտսեր դպրոցում կիրառվող ոչ թվանշային գնահատման կարգը, կարողանում է իրականացնել գնահատում ըստ սահմանված կարգի;
6. ճիշտ է ներկայացնում կրտսեր դպրոցի ստուգման կազմակերպման ձևերն ու տեսակները;
7. ճիշտ է ներկայացնում դիագնոստիկան որպես մարդասիրական մանկավարժության համակարգում ստուգմանն ու վերահսկողությանը փոխարինող հիմնական միջոց, դրա հնարավորությունները:
8. ճիշտ է ներկայացնում կրտսեր դպրոցում կիրառվող ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները, դրանց դասակարգումը, հիմնական հասկացությունները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, գործնական կատարման, անհատական կամ խմբային նախագծերի (պրոյեկտների), ներկայացման (պրեզենտացիաների), դասերի վարման, հարց ու պատասխանի միջոցով.

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են տարրական դասարանների ուսուցման կազմակերպման ձևերը, դրանց տարբերակումն ու ինտեգրումը, դասերի տիպերը և դրանց կառուցման առանձնահատկությունները կրտսեր դպրոցում, դասերին ներկայացվող մանկավարժական և դիդակտիկական պահանջները, կրտսեր դպրոցի գնահատման սկզբունքներ, դիագնոստիկան որպես մարդասիրական մանկավարժության համակարգում ստուգմանն ու վերահսկողությանը փոխարինող հիմնական միջոց:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 20 ժամ

Գործնական աշխատանք՝ 14 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4.**

Իմանա կրտսեր դպրոցականի դաստիարակության գործընթացի առանձնահատկությունները, բովանդակությունը մեթոդիկաները, բաղադրիչները, դաստիարակվածության դիագնոստիկան, կրտսեր դպրոցականների ծնողների հետ տարվող աշխատանքների մեթոդներն ու ձևերը:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Ուսանողը՝

1. գիտի և ճիշտ է ներկայացնում դաստիարակության դերը կրտսեր դպրոցի մանկավարժական գործընթացում,
2. գիտի դաստիարակության գործընթացի առանձնահատկությունները, դաստիարակության բովանդակությունը կրտսեր դպրոցում,
3. գիտի և ճիշտ է ներկայացնում կրտսեր դպրոցի դաստիարակության բաղադրիչները՝ բարոյական, աշխատանքնային, գեղագիտական, մտավոր, էկոլոգիական, տնտեսագիտական, իրավական և այլն,
4. գիտի և ճիշտ է ներկայացնում կրտսեր դպրոցական տարիքի երեխայի դաստիարակվածության դիագնոստիկայի մեթոդիկաները և տեխնոլոգիաները,
5. գիտի և ճիշտ է ներկայացնում կրտսեր դպրոցականների ծնողների հետ տարվող աշխատանքների բովանդակությունը, կիրառել այդ աշխատանքների կազմակերպման մեթոդներն ու ձևերը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, գործնական կատարման, անհատական կամ խմբային նախագծերի (պրոյեկտների), ներկայացման (պրեզենտացիաների), դասերի վարման, հարց ու պատասխանի միջոցով.

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են դաստիարակության գործընթացի առանձնահատկությունները, դաստիարակության բովանդակությունը, բաղադրիչները, դաստիարակվածության դիագնոստիկայի մեթոդիկաները և տեխնոլոգիաները կրտսեր դպրոցում, ծնողների հետ տարվող աշխատանքների բովանդակությունը, կազմակերպման մեթոդներն ու ձևերը:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք` 12 ժամ

Գործնական աշխատանք` 16 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5**

Իմանալ երեխայի անձի սոցիալականացման խնդիրները տարրական կրթության համակարգում, այս տարիքի հետ տարվող սոցիալ-մանկավարժական աշխատանքի բովանդակությունը, տեսակներն ու ձևերը:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Ուսանողը`

1. գիտի կրտսեր դպրոցական սոցիալականացման հիմնական դրույթները, հասկացությունները, կրտսեր դպրքոցական սոցիալական ակտիվության դրսևորումները,
2. գիտի և ճիշտ է ներկայացնում կրտսեր դպրոցականի իմացական, բարոյական, գեղագիտական, աշխատանքային, ֆիզիկական գործունեության սոցիալական ուղղվածությունը,
3. գիտի և ճիշտ է ներկայացնում երեխայի սոցիալական ակտիվության ձևավորման մակարդակը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման, անհատական կամ խմբային նախագծերի (պրոյեկտների), ներկայացման (պրեզենտացիաների):

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են կրտսեր դպրոցականի սոցիալականացման հիմնական դրույթները, հասկացությունները, սոցիալական ակտիվության դրսևորումները, սովորողների իմացական, բարոյական, գեղագիտական, աշխատանքային, ֆիզիկական գործունեության սոցիալական ուղղվածությունը:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք` 12 ժամ

Գործնական աշխատանք` 16 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 6.**

Իմանա դաստիարակության և սկզբնական կրթության պատմությունը:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Ուսանողը`

1. գիտի և ճիշտ է ներկայացնում բնական, պատմական պայմանների և կրոնի ազդեցությունը երեխայի դաստիարակության բնույթի վրա,
2. գիտի և ճիշտ է ներկայացնում ժողովրդական մանկավարժության էությունը և բովանդակությունը, դրա միջոցները,
3. գիտի դպրոցի և մանկավարժական մտքի պատմությունը 10-17-րդ դարերում և սկզբնական կրթության տարբեր ձևերը,
4. գիտի և ճիշտ է ներկայացնում դպրոցի և մանկավարժական մտքի պատմությունը 19-20-րդ դարերում, ժողովրդական դպրոցների տեսակները,

5. գիտի և ճիշտ է ներկայացնում սկզբնական օղակի ուսուցիչների պատրաստման գործընթացը Հայաստանում և այլ երկրներում,
6. գիտի և ճիշտ է ներկայացնում սկզբնական կրթության, դաստիարակության գաղափարները ականավոր մանկավարժների աշխատություններում,
7. գիտի էթնոմանկավարժության առանձնահատկությունները և դրա հաշվառումը կրտսեր դպրոցականների դաստիարակչական աշխատանքի ընթացքում:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, հարց ու պատասխանի միջոցով.

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և բավարար ներկայացված ժողովրդական մանկավարժության էությունը և բովանդակությունը, դրա միջոցները, էթնոմանկավարժության առանձնահատկությունները 10-17-րդ դարերում, տարրական կրթության տարբեր ձևերը, մանկավարժական մտքի պատմությունը 19-20-րդ դարերում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 14 ժամ

Գործնական աշխատանք՝ 8 ժամ

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ**

**ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ԴՏԴ - 04-09-013**

**ՆՊԱՏԱԿԸ**

Մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը կտիրապետի հատուկ մանկավարժության բնագավառում գիտելիքների, կարողությունների և հմտությունների, որոնք անհրաժեշտ են կրտսեր դպրոցի մանկավարժական գործընթացում հատուկ կարիքներ ունեցող երեխաների կրթությունն ու դաստիարակությունը արդյունավետ կազմակերպելու համար:

**ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 36 ժամ**

Տեսական պարապմունք՝ 22 ժամ

Գործնական աշխատանք՝ 14 ժամ

**ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

Այս մոդուլը յուրացնելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի «Մանկավարժություն», «Անատոմիա, ֆիզիոլոգիա, հիգիենա և առողջապահության հիմունքներ», «Հոգեբանություն» մոդուլները:

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. Իմանա հատուկ մանկավարժության բովանդակությունը և տեսական հիմքերը
2. Իմանա հատուկ մանկավարժության դիդակտիկական հիմունքները, հատուկ կրթության սկզբունքները, մեթոդներն ու տեխնոլոգիաները
3. Իմանա մտավոր զարգացման խանգարումներով երեխայի կրթության առանձնահատկությունները
4. Իմանա խոսքի խանգարումներով երեխայի հետ տարվող մանկավարժական աշխատանքի բովանդակությունը

5. Իմանա լսողության խանգարումներ ունեցող երեխայի ուսուցողադաստիարակչական, շտկողական աշխատանքի բովանդակությունը, մեթոդները
6. Իմանա տեսողության խանգարումներ ունեցող երեխայի շտկողական աշխատանքի մեթոդիկան:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

Մոդուլի ընդունելի կատարողականը գնահատվելու է սահմանված յուրաքանչյուր արդյունքի համար չափանիշների բավարար մակարդակի ապահովման դեպքում:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1.**

Իմանալ հատուկ մանկավարժության բովանդակությունը և տեսական հիմքերը:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Ուսանողը՝

1. ճիշտ է բացատրում հատուկ մանկավարժության օբյեկտը, առարկան և խնդիրները,
2. ճիշտ է ներկայացնում հատուկ մանկավարժության հիմնական հասկացությունները,
3. ճիշտ է ներկայացնում ժամանակակից հատուկ մանկավարժության բնագավառները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են հատուկ մանկավարժության օբյեկտը, առարկան և խնդիրները, հիմնական հասկացությունները, ժամանակակից բնագավառները:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2.**

Իմանալ հատուկ մանկավարժության դիդակտիկական հիմունքները, հատուկ կրթության սկզբունքները, մեթոդներն ու տեխնոլոգիաները:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Ուսանողը՝

1. ճիշտ է ներկայացնում հատուկ մանկավարժության դիդակտիկական սկզբունքների նշանակությունը,
2. ճիշտ է օգտվում հատուկ մանկավարժության մեթոդներից և տեխնոլոգիաներից,
3. ճիշտ է օգտվում հատուկ մանկավարժության հիմնական միջոցներից շտկողական ուսուցման գործընթացում:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, գործնական կատարման, անհատական կամ խմբային նախագծերի (պրոյեկտների), ներկայացման (պրեզենտացիաների) հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված:

Այս մոդուլը ուսումնասիրելու համար մուտքային մակարդակ չի պահանջվում:

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է

1. իմանա երեխաների համար ստեղծված հայ ազգային երաժշտարվեստի նմուշները,
2. գիտի համաշխարհային երաժշտարվեստի առավել հայտնի ստեղծագործությունները
3. իմանա երգի ուսուցման տարբեր մեթոդներ և հնարքներ,
4. կարողանա կազմակերպել տարբեր երաժշտական խաղեր.
5. կարողանա մայրենի լեզվի, խոսքի մշակման ճանապարհով (ճիշտ խոսելաձև, տրամաբանական շեշտ, հնչյունների ճիշտ արտասանություն) խոսքը ասերգի վերածելով՝ նպաստել սովորողի մեղեդային մտածողության զարգացմանը

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1.**

Իմանալ հայ ազգային և հոգևոր երաժշտարվեստի նմուշները, որոնք ստեղծված են երեխաների համար կամ հասկանալի, հասանելի են նրանց:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

Ուսանողը.

1. գիտի երեխաների համար ստեղծված ազգային և կոմպոզիտորական բարձրարվեստ երաժշտական ստեղծագործությունները, որոնք մատչելի կամ նախատեսված են 2-10 տարեկանների համար:
2. հայ ժողովրդական բանահյուսության որոշ նմուշների միջոցով (խաղիկներ, հաշվերգեր, խաղերգեր) տարբեր մեթոդներ կիրառելով, զարգացնում է երեխաների ռիթմի զարգացողությունը, երաժշտական ընկալունակությունը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կտրվեն հարցեր երեխաների համար նախատեսված հայ ազգային և հոգևոր երաժշտարվեստի նմուշների մասին, կհանձնարարվի ցուցադրել մեթոդներ և հնարքներ, որոնք ուղղված են երեխաների ռիթմի զարգացվածությունը և երաժշտական ընկալունակություն բարձրացնելուն:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է երաժշտական ստեղծագործությունների հատվածների հիման վրա գուշակել այդ ստեղծագործության անվանումը և

հեղինակին և երեխաների տարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ կարողանում է ներկայացնել խաղիկներ, հաշվերգեր, խաղերգեր:

Արդյունքի յուրացումը համարվում է կատարված, եթե ուսանողը կարողանում է առաջարկված 5 երաժշտական հատվածներից գուշակել 3-ը, ներկայացնում է հայ ժողովրդական բանահյուսության առնվազն 3 նմուշ, որոնք նպատակաուղղված են երեխաների ռիթմի զարգացվածությունը և երաժշտական ընկալունակություն բարձրացնելուն:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ձայնարկիչ (մագնիտոֆոն), ձայնասկավառակներ, մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, անհրաժեշտության դեպքում համակարգիչ:

## ՈւՍՈւՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 6 ժամ

Գործնական աշխատանք՝ 6 ժամ

## ԱՐԴՅՈՒՆՔ 2.

Գիտի համաշխարհային երաժշտարվեստի առավել հայտնի ստեղծագործությունները:

## ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը.

1. Գիտի համաշխարհային երաժշտարվեստի առավել հայտնի ստեղծագործությունները և դրանց հեղինակներին:
2. Գիտի դասական երաժշտության ունկնդրման կազմակերպման հնարքներ:
3. Կարողանում է դասական երաժշտության ունկնդրում կազմակերպել՝ ելնելով երեխաների տարիքային առանձնահատկություններից:

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվեն հարցեր համաշխարհային երաժշտարվեստի առավել հայտնի ստեղծագործությունների մասին:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է երաժշտական ստեղծագործությունների հատվածների հիման վրա գուշակել այդ ստեղծագործության անվանումը և հեղինակին և երեխաների տարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ ընտրում է համապատասխան երաժշտական գործեր:

Արդյունքի յուրացումը համարվում է կատարված, եթե ուսանողը կարողանում է առաջարկված 5 երաժշտական հատվածներից գուշակել 3-ը և կարողանում է ընտրել համաշխարհային երաժշտարվեստի առավել հայտնի ստեղծագործությունների առնվազն 3 նմուշ, որոնք դասախոսի կողմից կհամարվեն կատարման չափանիշներին համապատասխան:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ձայնարկիչ (մագնիտոֆոն), ձայնասկավառակներ, մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, անհրաժեշտության դեպքում համակարգիչ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 6 ժամ

Գործնական աշխատանք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3.

Իմանալ երգի ուսուցման տարբեր մեթոդներ և հնարքներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը.

1. գիտի տարբեր թեմատիկ երգերի ուսուցման և կատարման առանձնահատկությունները,
2. երգ-երաժշտությունը համատեղում է երեխաների գործունեության բոլոր ձևերի հետ,
3. ճիշտ է կազմակերպում երգի ուսուցումը՝ նպաստելով երեխաների ստեղծագործական, երևակայության, երաժշտական մտածողության զարգացմանը,
4. կարողանում է պարերգի ուսուցումը վերածել ներկայացման,
5. կարողանում է երաժշտությունը գույներով արտահայտել
6. կարողանում է մեկնաբանել լսած երաժշտությունը, ներկայացնել իր զգացողությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կհանձնարարվի կազմակերպել երգի և պարերգի ուսուցման դասի նախագիծ, գույներով և խոսքերով արտահայտել որևէ երաժշտության մասին իր զգացողությունները:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է դասախոսի հանձնարարականի հիման վրա ինքնուրույն մշակել որևէ երգի ուսուցման փորձնական դասի անցկացման նախագիծ, դրան կցելով այդ երգի մասին գունային և խոսքային սեփական պատկերացումները: Արդյունքի յուրացումը համարվում է կատարված, եթե ուսանողը կարողանում է հաջողությամբ ցուցադրել երգի ուսուցման փորձնական դաս:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ձայնարկիչ (մագնիտոֆոն), ձայնասկավառակներ, գունավոր մատիտներ կամ ջրաներկ, նկարչական թղթեր, մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, անհրաժեշտության դեպքում համակարգիչ, բարձրախոս, ձայնի ուժեղացուցիչներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 6 ժամ

Գործնական աշխատանք՝ 10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4.

Կազմակերպել տարբեր երաժշտական խաղեր, վարժանքներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

1. գիտի երաժշտական խաղերի առանձնահատկությունները և խնդիրները,
2. կարողանում է երաժշտական որոշակի խնդիրներով խաղեր կազմակերպել,

3. կարողանում է երաժշտական տարբեր վարժությունների միջոցով զարգացնել երեխաների ռիթմի զգացողությունը,
4. երաժշտական և ձեռքի տակ եղած հնչող տարբեր գործիքներով և առարկաներով կարողանում է ռիթմիկ ձայներ ստանալ

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կհանձնարարվի մշակել և կազմակերպել երաժշտական որոշակի խնդիրներով խաղեր, ստանալ ռիթմիկ ձայներ երաժշտական և ձեռքի տակ եղած հնչող տարբեր գործիքներով և առարկաներով:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է դասախոսի հանձնարարականի հիման վրա ինքնուրույն հորինել և ցուցադրել որևէ երաժշական խաղ, դրան զուգահեռ ստանալով ռիթմիկ ձայներ երաժշտական և ձեռքի տակ եղած հնչող տարբեր գործիքներով և առարկաներով:

Արդյունքի յուրացումը համարվում է կատարված, եթե ուսանողը կարողանում է հաջողությամբ ցուցադրել իր կողմից հորինված երաժշտական խաղը և ստանում է ռիթմիկ ձայներ երաժշտական և ձեռքի տակ եղած հնչող տարբեր գործիքներով և առարկաներով:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ձայնարկիչ (մագնիտոֆոն), ձայնասկավառակներ, երաժշտական որոշ գործիքներ (դհոլ, դափ, կիթառ, այլն), մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, անհրաժեշտության դեպքում համակարգիչ, բարձրախոս, ձայնի ուժեղացուցիչներ:

**ՈւՍՈւՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք` 4 ժամ

Գործնական աշխատանք` 12 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5.**

Կարողանալ մայրենի լեզվի, խոսքի մշակման ճանապարհով (ճիշտ խոսելաձև, տրամաբանական շեշտ, հնչյունների ճիշտ արտասանություն) խոսքը ասերգի վերածել` նպաստելով սովորողի մեղեդային մտածողության զարգացմանը:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`**

Ուսանողը

1. Կարողանում է երեխաների խոսքն ու գործունեությունը այնպես կազմակերպել, որ խոսքը դառնա ավելի երաժշտական, վերածվի ասերգի, որոշ կտորներ երեխաները նաև երգեն:
2. Գիտի մայրենի լեզվի ճիշտ խոսելաձևն ու արտասանական առանձնահատկությունները:
3. Երեխաների երաժշտական և խոսքային գործունեությունը կազմակերպելիս կարողանում է ճիշտ կիրառել արտասանական առանձնահատկությունը:
4. Ճիշտ է կազմակերպում երգ երաժշտության ունկնդրումը, նպաստելով երեխայի լսելու տեսնելու, խորհելու ունակությունների զարգացմանը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կհանձնարարվի ընտրել առանձին ստեղծագործություններ, որոնք հնարավոր կլինի հետագայում վերածել ասերգերի և օգտագործել դրանք երեխաների երաժշտական և խոսքային գործունեության կազմակերպման, նպաստելով երեխայի լսելու տեսնելու, խորհելու ունակությունների զարգացմանը:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է դասախոսի հանձնարարականի հիման վրա իր կողմից ընտրված ստեղծագործությունները վերածել ասերգերի և ներկայացնել դրանք կատարման չափանիշներին համաձայն:

Արդյունքի յուրացումը համարվում է կատարված, եթե ուսանողը կարողանում է հաջողությամբ կատարել իր կողմից հորինված առնվազն 2 ասերգ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ձայնարկիչ (մագնիտոֆոն), ձայնասկավառակներ, մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, անհրաժեշտության դեպքում համակարգիչ, բարձրախոս, ձայնի ուժեղացուցիչներ, երաժշտական որոշ գործիքներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 4 ժամ

Գործնական աշխատանք՝ 12 ժամ

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ՝ ՊԱՐ ԵՎ ՌԻԹՄԻԿԱ**

**ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ԴՏԴ 04-09-027**

**ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝**

Այս մոդուլի նպատակն է սովորողին ծանոթացնել տարրական դպրոցում պարի ուսուցման նպատակներին և առնձնահատկություններին, սովորեցնել ազգային պարեր, զարգացնել նրանց երաժշտական լսողությունը, ռիթմի զգացողությունը, գեղարվեստական մտածողությունը, մարմնին տիրապետելու մշակույթ ձևավորել:

**ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 72 ժամ**

Տեսական պարապմունք՝ 14 ժամ

Գործնական աշխատանք՝ 58 ժամ

**ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ՝**

Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ պետք է յուրացրած լինի «երգ,երաժշտություն և դասավանդման մեթոդիկա» մոդուլը:

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.

1. իմանա պարային հիմնական շարժումները,
2. կարողանա խմբի հետ պարել հայկական ավանդական պարերի որոշ տեսակներ,
3. տիրապետի պարի ուսուցման տարբեր մեթոդների և հնարքների,
4. կարողանա պարի միջոցով զարգացնել երեխաների ստեղծագործական երևակայությունը,
5. կարողանա մանկական տարբեր ոճերի պարեր բեմադրել՝ կիրառելով պարը որպես մտածողության, հուզականմային որակների արտահայտման միջոց:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1.**

Իմանալ պարային հիմնական դիրքերն ու շարժումները, հայ ավանդական պարարվեստի նմուշներ:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

Ուսանողը

1. գիտի պարային հիմնական դիրքերն ու շարժումները
2. տիրապետում է ազգային պարին բնորոշ շարժումներին, պարային դիրքերին
3. կարողանում է երգին կամ երաժշտությանը համապատասխան պար բեմադրել
4. գիտի մի շարք ազգային պարեր, մանկական խաղ-պարեր
5. ճիշտ է կարողանում տարբեր պարեր և պարային շարժումներ օգտագործել երեխայի գործունեությունը կազմակերպելիս (մարմնամարզություն, ծիսական բեմականացում, երաժշտական և շարժուն խաղերի կազմակերպում, թատրոն, մնջախաղ):
6. կարողանում է ճիշտ պահպանել պարային կեցվածքը, մարմնի տարբեր մասերի շարժումների զուգորդումը:
7. Ծանոթ է ազգային ծեսերին և դրանց հատուկ պարերին, բեմականացվող խաղերին:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կհանձնարարվի ցուցադրել ազգային որոշ պարային շարժումներ՝ համաձայն կատարման չափանիշների:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է ներկայացնել առնվազն 1 ազգային պար:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ձայնարկիչ (մագնիտոֆոն), ձայնասկավառակներ, մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, պարասրահ, անհրաժեշտության դեպքում համակարգիչ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 2 ժամ

Գործնական աշխատանք՝ 8 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2.**

Կարողանա խմբի հետ պարել հայ ավանդական պարարվեստի նմուշներ:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

Ուսանողը

1. Գիտի ազգային ավանդական պարերի հիմանական դիրքերն ու շարժումները:
2. Կարողանում է ազգային պարին հատուկ շարժումներով պարեր, պար-ներկայացումներ բեմադրել:
3. Կարողանում է խմբի հետ պարել առավել տարածված պարերը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կհանձնարարվի մյուս ուսանողների հետ միասին բեմադրել որևէ ազգային ավանդական պար և ներկայացնել այն:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է մյուս ուսանողների հետ միասին բեմադրած պարը ներկայացնել:

Արդյունքի յուրացումը համարվում է կատարված, եթե ուսանողը կարողանում է ներկայացնել առնվազն 1 պար:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ձայնարկիչ (մագնիտոֆոն), ձայնասկավառակներ, մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, պարասրահ, անհրաժեշտության դեպքում՝ համակարգիչ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 2 ժամ

Գործնական աշխատանք՝ 14 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.**

Տիրապետել պարի ուսուցման տարբեր մեթոդների և հնարքների:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

Ուսանողը՝

1. Գիտի պարերի ուսուցման մեթոդներ և հնարքներ:
2. Մանկական շարժուն խաղերում, պարերում ճիշտ է կիրառում ազգային պարի տարրերը՝ հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները:
3. Կարողանում է բեմականացնել երգեր, պարեր, երաժշտական հեքիաթներ և պարով կերպարներ ստեղծել՝ օգտագործելով պարը որպես արտահայտչաձև:
4. Կարողանում պարը կիրառել որպես մտածողության արտահայտման միջոցներից մեկը՝ պարային շարժումներով միտք արտահայտել - փոխանցելով:
5. Գիտի ազգային մանկական շարժուն խաղեր և կարողանում է դրանք օգտագործել միջոցառումների ժամանակ:
6. Կարողանում է ներկայացնել կամ բեմադրել կենցաղային աշխատանքային տեսարաններ (խաղող ճզմելը, ճլորթի խաղալը, խնոցի հարելը, սերմ ցանելը…) և դրանք ներառել մանկական պարերի մեջ:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կհանձնարարվի պարի միջոցով ներկայացնել կամ բեմադրել որևէ հեքիաթ կամ կենցաղային աշխատանքային տեսարան, որտեղ կօգտագործվեն մանկական շարժուն խաղեր, ազգային պարի տարրեր՝ հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է ներկայացնել որևէ մանկական պար:

Արդյունքի յուրացումը համարվում է կատարված, եթե ուսանողը կարողանում է ներկայացնել առնվազն 1 մանկական պար:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ձայնարկիչ (մագնիտոֆոն), ձայնասկավառակներ, մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, պարասրահ, անհրաժեշտության դեպքում՝ համակարգիչ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 4 ժամ

Գործնական աշխատանք՝ 10 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4.**

Կարողանա պարի միջոցով զարգացնել երեխաների ստեղծագործական երևակայությունը

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

Ուսանողը

1. Կարողանում է պարել ցանկացած երաժշտության տակ:
2. Կարողանում է մի պարում տարբեր ոճեր միացնել:
3. Կարողանում է պարը որպես լեզու օգտագործել՝ պարով կերպար ստեղծել, մտածողություն արտահայտել, սյուժե բեմականացնել՝ համատեղելով պարն ու մնջախաղը:
4. Պարուսուցումն իրականացնում է նաև որպես մարմնին տիրապետելու արվեստ:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել տարբեր ոճի պարեր, ստեղծելով տարբեր կերպարներ:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ցանկացած երաժշտության տակ կարողանում է կատարել համապատասխան պարային շարժումներ, համատեղելով դրանք մնջախաղի հնարքների հետ և ստեղծելով տարբեր կերպարներ:

Արդյունքի յուրացումը համարվում է կատարված, եթե ուսանողը կարողանում է ներկայացնել առնվազն 2 պար:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ձայնարկիչ (մագնիտոֆոն), ձայնասկավառակներ, մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, պարասրահ, անհրաժեշտության դեպքում համակարգիչ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 2 ժամ

Գործնական աշխատանք՝ 10 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5.**

Կարողանալ մանկական տարբեր ոճերի պարեր բեմադրել՝ կիրառելով պարը որպես մտածողության, հուզակամային որակների արտահայտման միջոց,

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

Ուսանողը՝

1. Գիտի տարբեր ոճերի պարերի առանձնահատկությունները:

2. Կարողանում է ռիթմիկ և մարզական պարեր բեմադրել:
3. Կարողանում է համադրել տարբեր ոճերի պարային շարժումներ:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կհանձնարարվի բեմադրել որևէ մանկական պար և ներկայացնել այն:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը տարբեր ոճի երաժշտության տակ բեմադրում է մանկական պարեր:

Արդյունքի յուրացումը համարվում է կատարված, եթե ուսանողը կարողանում է տարբեր ոճի առնվազն 2 պար:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ձայնարկիչ (մագնիտոֆոն), ձայնասկավառակներ, մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, պարասրահ, անհրաժեշտության դեպքում համակարգիչ:

**ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք` 4 ժամ

Գործնական աշխատանք` 16 ժամ:

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ**

**ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ` ԴՏԴ 04-09-028**

**ՆՊԱՏԱԿԸ`**

Այս մոդուլի նպատակն է կրտսեր դպրոցի ապագա ուսուցիչներին օգնել տիրապետելու կրտսեր դպրոցականների ֆիզիկական զարգացման և նրանց ֆիզիկական գործունեության կազմակերպման մեթոդներին ու միջոցներին, որոնք անհրաժեշտ է կիրառել աշխատանքային գործունեության ընթացքում:

**ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ` 90 ժամ**

Տեսական պարապմունք` 38 ժամ

Գործնական աշխատանք` 52 ժամ

**ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ**

Այս մոդուլի համար անհրաժեշտ է յուրացնել «Անատոմիա, ֆիզիոլոգիա, հիգիենա և առողջապահության հիմունքներ», «Մանկավարժություն», «Հոգեբանություն» մոդուլները:

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ`**

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. Իմանա կրտսեր դպրոցականների ֆիզիկական դաստիարակության հիմնական հասկացությունները, խնդիրները, միջոցները և աշխատանքային ձևերը տարրական դասարաններում:
2. Իմանա և հիմնավորելով կիրառի ուսուցման և ուսումնական գործունեության կազմակերպման տարբեր մեթոդները` դպրոցականի ֆիզիկական դաստիարակության աշխատանքները կազմակերպելիս:
3. Բնութագրի և ցուցադրի մարմնամարզական վարժությունների տեսակները /շարուններ-շարափոխումներ, ընդհանուր ֆիզիկական զարգացմանը նպաստող վարժություններ, հիմնական շարժումներ, պարային շարժումներ, խաղեր, սպորտային վարժություններ/:

4. Բնութագրի և ցուցադրի դպրոցականի օրգանիզմի կոփման և կեցվածքի ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքները դպրոցում:
5. Բնութագրի և ցուցադրի ֆիզկուլտ-առողջարարական միջոցառումները և արտադասարանական աշխատանքները դպրոցում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1.

Իմանալ դպրոցականների ֆիզիկական դաստիարակության ընդհանուր հարցերը /հիմնական հասկացությունները, խնդիրները, միջոցները և աշխատանքային ձևերը տարրական դասարաններում/:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը

1. Ճիշտ է բնութագրում ֆիզիկական դաստիարակության հիմնական հասկացությունները, խնդիրները և դրանց փոխկապակցվածությունը
2. Ճիշտ է ներկայացնում ֆիզիկական դաստիարակության միջոցների տեսակները և երեխայի օրգանիզմի վրա նրանց ազդեցության ուղիները
3. Ճիշտ է ներկայացնում դպրոցականի օրգանիզմի զարգացման օրինաչափությունները և առանձնահատկությունները
4. Ճիշտ է բնութագրում ֆիզիկական դաստիարակության կապը մտավոր, աշխատանքային, գեղագիտական, բարոյական դաստիարակության հետ և հիմնավորում նրանց նպատակների, խնդիրների ընդհանրությունն ու նշանակությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվեն հարցեր դպրոցականների ֆիզիկական դաստիարակության ընդհանուր խնդիրների վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն, ճիշտ է բնութագրում ֆիզիկական դաստիարակության հիմնական հասկացությունները, խնդիրները և դրանց փոխկապակցվածությունը, ներկայացնում է ֆիզիկական դաստիարակության միջոցների տեսակները և երեխայի օրգանիզմի վրա նրանց ազդեցության ուղիները, դպրոցականի օրգանիզմի զարգացման օրինաչափությունները և առանձնահատկությունները, ճիշտ է բնութագրում ֆիզիկական դաստիարակության կապը մտավոր, աշխատանքային, գեղագիտական, բարոյական դաստիարակության հետ և հիմնավորում նրանց նպատակների, խնդիրների ընդհանրությունն ու նշանակությունը:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, գրավոր աշխատանքի կամ հարցուպատասխանի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողն ըստ կատարման չափանիշների ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր կամ գրավոր հարցերի առնվազն 80%-ին:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական ձեռնարկներ, երաշխավորություններ, մասնագիտական գրականություն, անհրաժեշտության դեպքում՝ տեսաֆիլմեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 12 ժամ

Գործնական աշխատանք՝ 6 ժամ

Արդյունք 2.

Իմանալ և հիմնավորելով կիրառել ուսուցման և ուսումնական գործունեության կազմակերպման տարբեր մեթոդները՝ դպրոցականի ֆիզիկական դաստիարակության աշխատանքները կազմակերպելիս:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

Ուսանողը՝

1. ճիշտ է ներկայացնում ֆիզիկական կուլտուրայի դասին առաջադրվող պահանջները և խնդիրները
2. ճիշտ է բնութագրում և ցուցադրում դասի կառուցվածքային բաժանումը, դասի մասերի տևողությունը, խնդիրները, բովանդակությունը, ֆիզիկական ծանրաբեռնվածությունը և դասի խտությունը
3. ճիշտ է բնութագրում և ցուցադրում ֆիզկուլտուրայի դասերի տեսակները ըստ բովանդակության բնույթի և ըստ մանկավարժական առաջատար խնդիրների
4. ճիշտ է ներկայացնում և հիմնավորում ֆիզկուլտուրայի դասի նախապատրաստական աշխատանքների հաջորդականությունը և ուսումնական նյութի պլանավորումը ըստ դասի կառուցվածքային մասերի
5. ճիշտ է ներկայացնում դասի ընթացքում աշակերտների ֆիզիկական ծանրաբեռնվածության և դասի խտության չափավորումը, մշակում է հավանական վնասվածքների կանխարգելման միջոցառումներ
6. ճիշտ է բնութագրում և ցուցադրում աշակերտների գործունեության կազմակերպման ֆրոնտալ, հարահոս, հերթափոխային, խմբակային, շրջանաձև մեթոդների առանձնահատկությունները, առավելությունները և թերությունները
7. ճիշտ է բնութագրում և ցուցադրում ուսուցման խոսքային և գործնական մեթոդների կիրառումը ուսումնական աշխատանքների ժամանակ
8. Ըստ առաջադրանքի ճիշտ է կատարում վարժությունների անմիջական ցուցադրման եղանակները. ա.իրական, բ.շեշտադրված, գ.հայելաձև, դ.առաջատար, ե.հակադրական

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվեն հարցեր դպրոցականների ֆիզիկական դաստիարակության աշխատանքները կազմակերպելու ընթացքում ուսումնական գործունեության կազմակերպման տարբեր մեթոդների վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն, ճիշտ է ներկայացնում ֆիզիկական կուլտուրայի դասին առաջադրվող պահանջները և խնդիրները, ճիշտ է բնութագրում և ցուցադրում դասի կառուցվածքային բաժանումը, դասի մասերի տևողությունը, խնդիրները, բովանդակությունը, ֆիզիկական ծանրաբեռնվածությունը և դասի խտությունը, ճիշտ է բնութագրում և ցուցադրում ֆիզկուլտուրայի դասերի տեսակներն ըստ բովանդակության բնույթի և ըստ մանկավարժական առաջատար խնդիրների, ճիշտ է ներկայացնում և հիմնավորում ֆիզկուլտուրայի դասի նախապատրաստական աշխատանքների հաջորդականությունը և ուսումնական նյութի պլանավորումն ըստ դասի կառուցվածքային մասերի, ճիշտ է ներկայացնում դասի ընթացքում աշակերտների ֆիզիկական ծանրաբեռնվածության և դասի խտության չափավորումը, մշակում է հավանական վնասվածքների կանխարգելման միջոցառումներ, ճիշտ է բնութագրում և ցուցադրում աշակերտների գործունեության կազմակերպման ֆրոնտալ, հարահոս, հերթափոխային, խմբակային, շրջանաձև մեթոդների առանձնահատկությունները, առավելությունները և թերությունները,

ճիշտ է բնութագրում և ցուցադրում ուսուցման խոսքային և գործնական մեթոդների կիրառումը ուսումնական աշխատանքների ժամանակ, ըստ առաջադրանքի ճիշտ է կատարում վարժությունների անմիջական ցուցադրման եղանակները:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, գրավոր աշխատանքի կամ ցուցադրության միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողն ըստ կատարման չափանիշների ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր կամ գրավոր հարցերի առնվազն 80%-ին և/կամ ճիշտ է ցուցադրում վարժությունների անմիջական ցուցադրման եղանակներն ըստ կատարման չափանիշների:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական ձեռնարկներ, երաշխավորություններ, մասնագիտական գրականություն, անհրաժեշտության դեպքում՝ տեսաֆիլմեր:

**ՈւՍՈւՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 10 ժամ

Գործնական աշխատանք՝ 8 ժամ

**Արդյունք 3.**

Բնութագրել և ցուցադրել մարմնամարզական վարժությունների տեսակները /շարումներ-շարափոխումներ, ընդհանուր զարգացմանը նպաստող վարժություններ, հիմնական շարժումներ, պարային շարժումներ, խաղեր, սպորտային վարժություններ/:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

Ուսանողը

1. Ըստ առաջադրանքի կազմում է մարմնամարզական վարժությունների դասակարգման ժամանակացույց
2. Ներկայացնում և ցուցադրում է շարումների, շարափոխումների, դարձումների տեսակները և դրանց ուսուցման մեթոդիկան տարրական դասարաններում
3. Ներկայացնում և ցուցադրում է ընդհանուր զարգացմանը նպաստող վարժությունների տեսակները տարրական դասարաններում
4. բնութագրում և ցուցադրում է ելման դրությունների տեսակները
5. բնութագրում և ցուցադրում է հիմնական շարժումների տեսակները և ուսուցման մեթոդները տարրական դասարաններում
6. Բնութագրում է շարժախաղերի և մարզախաղերի նշանակությունը դպրոցականների շարժողական որակների ձևավորման գործում և ներկայացնում է դրանց կազմակերպման մեթոդները
7. Ներկայացնում և գործնականորեն կատարում է շարժախաղերի և մարզախաղերի կազմակերպմանն առաջադրվող կանոնները, կազմակերպման փուլերը և խաղի բեռնվածության չափավորումը
8. ինքնուրույն կազմում է խաղաքարտ տարբեր բնույթի շարժախաղերի համար

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կհանձնարարվեն կատարել առաջադրանքներ և կազմակերպել շարժախաղեր ու մարզախաղեր ըստ կատարման չափանիշների:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողն ըստ առաջադրանքի կազմում է մարմնամարզական վարժությունների դասակարգման ժամանակացույց, ցուցադրում է շարումների, շարափոխումների, դարձումների և ընդհանուր զարգացմանը նպաստող վարժությունների տեսակները, և դրանց ուսուցման մեթոդիկան տարրական դասարաններում, ցուցադրում է ելման դրությունների, հիմնական շարժումների տեսակները և ուսուցման մեթոդները, գործնականորեն կատարում է շարժախաղերի և մարզախաղերի կազմակերպմանն առաջադրվող կանոնները, կազմակերպման փուլերը և խաղի բեռնվածության չափավորումը, կազմում է խաղաքարտ տարբեր բնույթի շարժախաղերի համար:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է ուսանողի կողմից խաղաքարտի հիման վրա որևէ բնույթի շարժախաղի մշակման, կազմակերպման ու ներկայացման միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողն ըստ կատարման չափանիշների ճիշտ է ցուցադրում կամ կատարում բոլոր գործողությունները:

### ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական ձեռնարկներ, երաշխավորություններ, մասնագիտական գրականություն, սահմանված կարգով կահավորված մարզադահլիճ, անհրաժեշտության դեպքում՝ տեսաֆիլմեր:

### ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 4 ժամ

Գործնական աշխատանք՝ 14 ժամ

### Արդյունք 4.

Բնութագրել և գործնականորեն ցուցադրել դպրոցականի օրգանիզմի կոփման և կեցվածքի ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքները դպրոցում:

### ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

1. ճիշտ է ներկայացնում ֆիզիկական վարժություններով պարապմունքների հիգիենիկ կանոնները և դպրոցականի անձնական հիգիենային ներկայացվող պահանջները
2. ճիշտ է բնութագրում կոփման ֆիզիոլոգիական էությունը, նշանակությունը, կոփման միջոցները և նրանց ներկայացվող հիգիենիկ կանոնները
3. ճիշտ է բնութագրում ճիշտ կեցվածքի և կեցվածքի շեղումների արտաքին նշանները
4. Ըստ առաջադրանքի ճիշտ է կազմում կեցվածքի ձևավորմանը նպաստող ֆիզիկական վարժությունների համալիր
5. ճիշտ է ներկայացնում դպրոցականի կեցվածքի շեղման պատճառները:

### ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կհանձնարարվի գործնականորեն ցուցադրել են կրտսեր դպրոցականի օրգանիզմի կոփման և կեցվածքի ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքները տարրական դպրոցում:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը գիտի դպրոցականի անձնական հիգիենային ներկայացվող պահանջները, օրգանիզմի կոփման միջոցները և նրանց ներկայացվող հիգիենիկ կանոնները, ճիշտ է կազմում կեցվածքի ձևավորմանը նպաստող ֆիզիկական վարժությունների համալիրը:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է ուսանողի կողմից դպրոցականի կեցվածքի շեղման պատճառների իմացության և դպրոցականի բնականոն կեցվածքի ձևավորմանը նպաստող ֆիզիկական վարժությունների համալիր մշակելու միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողն ըստ կատարման չափանիշների ճիշտ է ցուցադրում կամ կատարում բոլոր գործողությունները:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական ձեռնարկներ, երաշխավորություններ, մասնագիտական գրականություն, սահմանված կարգով կահավորված մարզադահլիճ, անհրաժեշտության դեպքում՝ տեսաֆիլմեր:

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 8 ժամ

Գործնական աշխատանք՝ 10 ժամ

**Արդյունք 5.**

Բնութագրել և ցուցադրել ֆիզկուլտ-առողջարարական միջոցառումները և արտադասարանական աշխատանքները դպրոցում:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

Ուսանողը՝

1. Ճիշտ է բնութագրում և ցուցադրում առավոտյան նախավարժանքի, ֆիզկուլտ-դադարի նշանակությունը և կառուցվածքը
2. Ճիշտ է բնութագրում և ցուցադրում արտադասարանական աշխատանքների ձևերը և դրանց առաջադրվող խնդիրները տարրական դասարաններում
3. Ըստ առաջադրանքի ճիշտ է կատարում մարզական տոնի և ժամանցների նախապատրաստական աշխատանքներ, կազմում է սցենարներ
4. Ըստ առաջադրանքի ճիշտ է կազմում տուրիստական արշավի ծրագիր՝ կատարելով երթուղու քարտեզագրում:
5. Ըստ առաջադրանքի ճիշտ է կազմում դպրոցականների յուրացրած շարժողական հատկությունների, հմտությունների և ունակությունների գնահատման սանդղակ

՝Ուսանողին կհանձնարարվի գործնականորեն ցուցադրել կրտսեր աշակերտների ֆիզկուլտ-առողջարարական միջոցառումների և արտադասարանական աշխատանքների կազմակերպումը:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ցուցադրում է առավոտյան նախավարժանքի, ֆիզկուլտ-դադարի կառուցվածքը, արտադասարանական աշխատանքների ձևերը, ճիշտ է կատարում մարզական տոնի և ժամանցների նախապատրաստական աշխատանքներ, կազմում է սցենարներ, դպրոցականների յուրացրած շարժողական հատկությունների, հմտությունների և ունակությունների գնահատման սանդղակ, ճիշտ է մշակում զբոսաշրջային արշավի ծրագիր:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է ուսանողի կողմից արտադասարանական աշխատանքների, մարզական տոնի և ժամանցների սցենարների մշակման, դպրոցականների յուրացրած շարժողական հատկությունների, հմտությունների և ունակությունների գնահատման սանդղակի կազմելու միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողն ըստ կատարման չափանիշների ճիշտ է ցուցադրում կամ կատարում բոլոր գործողությունները:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական ձեռնարկներ, երաշխավորություններ, մասնագիտական գրականություն, սահմանված կարգով կահավորված մարզադահլիճ, անհրաժեշտության դեպքում՝ տեսաֆիլմեր:

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 4 ժամ

Գործնական աշխատանք՝ 14 ժամ

**ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ**

**ՏՆՕՐԵՆ**

____________________
(ազգանուն, անուն)

« » 200

____________________________________
Ուսումնական հաստատության անվանումը

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

0312 «ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ Միջին մասնագիտական
ՄԱՍՆԱԳԵՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ՝ Տարրական դասարանների ուսուցիչ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 3տարի
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ՝ Առկա

## I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

| Կուրսը | սեպտեմբ. | | | | | հոկտեմ | | | | նոյեմբեր | | | | դեկտեմբեր | | | | | հունվ. | | | | փետր. | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1 - 7 | 8 14 | 15 21 | 22 28 | 27.09 5.10 | 6 12 | 13 19 | 20 26 | 27.10 2.11 | 3 9 | 10 16 | 17 23 | 24 30 | 1 7 | 8 14 | 15 21 | 22 28 | 29.12 4.01 | 5 11 | 12 18 | 19 25 | 26.01 1.02 | 2 8 | 9 15 | 16 22 | 23.02 1.03 |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 |
| 1 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | | | | | | | | :: | :: | = | = | | | | | | |
| 3 | | | | | | | | | | | | | | | | | :: | :: | = | = | | | | | | |
| 4 | ◇ | | | | | | | | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | :: | = | = | | | | | | |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| Կուրսը | մարտ | | | | | ապրիլ | | | | մայիս | | | | հունիս | | | | | հուլիս | | | | օգոստոս | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2 8 | 9 15 | 16 22 | 23 29 | 30.03 5.04 | 6 12 | 13 19 | 20 26 | 27.04 3.05 | 4 10 | 11 17 | 18 24 | 25 31 | 1 7 | 8 14 | 15 21 | 22 28 | 29.06 5.07 | 6 12 | 13 19 | 20 26 | 27.07 2.08 | 3 9 | 10 16 | 17 23 | 24 31 |
| | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 | 36 | 37 | 38 | 39 | 40 | 41 | 42 | 43 | 44 | 45 | 46 | 47 | 48 | 49 | 50 | 51 | 52 |
| 1 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | | | | | :: | :: | ◇ | ◇ | = | = | = | = | = | = | = | = | = |
| 3 | | | | | | | | | | | | | ◇ | ◇ | ◇ | ◇ | :: | :: | = | = | = | = | = | = | = | = |
| 4 | | | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | :: | :: | X | X | X | X | X | III | III | III | = | = | = | = | = | = | = |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| Կուրսը | II. ժամանակի բյուջեն /շաբաթներով/ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Տեսական ուսուցում | Մոդուլների ամփոփում | Պրակտիկա | Ամփոփիչ պետական ատեստավորում | Արձակուրդ | Ընդամենը | |
| 1 | | | | | | | |
| 2 | 35 | 4 | 2 | | 11 | 52 | |
| 3 | 34 | 4 | 4 | | 10 | 52 | |
| 4 | 17 | 3 | 20 | 3 | 9 | 52 | |
| Ընդամենը | 86 | 11 | 26 | 2 | 30 | 156 | |

| | 0 | ◇ | X | : : | III | = |
|---|---|---|---|---|---|---|
| Տեսական ուսուցում | Ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմամբ | Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման | Նախաավարտական, արտադրական պրակտիկա | Մոդուլների ամփոփում | Ամփոփիչ պետական ատեստավորում | Արձակուրդ |

## III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

| N | Առարկաների անվանումը և մոդուլները | Ատեստավորում ըստ կիսամյակների | | | Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ) | | | | Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Պարտադիր լսարանային բեռնվածություն | | | | 2- րդ կուրս | | 3-րդ կուրս | | 4-րդ կուրս | |
| | | | | | | Այդ թվում | | | | | | | | |
| | | Քննութ. | Ստուգարք | Կուրս. աշխ. | Ընդամենը | Տեսակ. ուսուցում | Լաբոր. և գործն. աշխ | Սեմինար պարապմունք | 3-րդ կիս. 16 շաբ | 4-րդ կիս. 19 շաբ. | 5-րդ կիս. 16 շաբ. | 6-րդ կիս. 18 շաբ. | 7-րդ կիս. 8 շաբ. | 8-րդ կիս 9 շաբ. |
| **1.** | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ** | | | | | | | | | | | | | |
| 1.1 | Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ | | 3,4տ | | 72 | 18 | 54 | | 36 | 36 | | | | |
| 1.2 | Տնտեսագիտության հիմունքներ | | 4տ | | 48 | 26 | 22 | | | 48 | | | | |
| 1.3 | Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ | | 4տ | | 48 | 32 | 16 | | | 48 | | | | |
| 1.4 | Իրավունքի հիմունքներ | | 3տ | | 36 | 18 | 18 | | 36 | | | | | |
| 1.5 | Պատմություն | | 4տ | | 48 | 28 | 20 | | | 48 | | | | |
| 1.6 | Ռուսաց լեզու | | 5տ | | 66 | 18 | 48 | | | | 66 | | | |
| 1.7 | Օտար լեզու | | 5,6տ | | 66 | 18 | 48 | | | | 46 | 20 | | |
| 1.8 | Ֆիզիկական կուլտուրա | | 3,4,5,6,7,8 | | 172 | 36 | 136 | | 32 | 38 | 32 | 36 | 16 | 18 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **556** | **194** | **362** | | **104** | **218** | **144** | **56** | **16** | **18** |
| **2.** | **ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ** | | | | | | | | | | | | | |
| 2.1 | Քաղացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր | | 4տ | | 18 | 18 | | | | 18 | | | | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **18** | **18** | | | | **18** | | | | |
| **3.** | **ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | | | | | | | | | | |
| 3.1 | Հաղորդակցման հմտություններ | | 3տ | | 36 | 18 | 18 | | 36 | | | | | |
| 3.2 | Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ | | 3տ | | 54 | 24 | 30 | | 54 | | | | | |
| 3.3 | Անվտանգություն և առաջին օգնություն | | 3տ | | 36 | 20 | 16 | | 36 | | | | | |
| 3.4 | Համակարգչային օպերատորության հիմունքներ | | 3տ | | 54 | 10 | 44 | | 54 | | | | | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **180** | **72** | **108** | | **180** | | | | | |
| **4.** | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ** | | | | | | | | | | | | | |
| 4.1 | Հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն | 3 | | | 72 | 24 | 48 | | 72 | | | | | |
| 4.2 | Շարահյուսություն և ոճաբանություն | | 4տ | | 72 | 26 | 46 | | 36 | 36 | | | | |
| 4.3 | Խոսքի զարգացում | 5 | | | 72 | 10 | 62 | | | | 72 | | | |
| 4.4 | Մաթեմատիկա | 4 | | | 144 | 60 | 84 | | 68 | 76 | | | | |
| 4.5 | Գրականություն | | 4տ | | 72 | 16 | 56 | | | 72 | | | | |
| 4.6 | Անատոմիա, ֆիզիոլոգիա, հիգիենա և առողջապահության հիմունքներ | 4 | | | 108 | 64 | 44 | | 50 | 58 | | | | |
| 4.7 | Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ | | 4տ | | 36 | 6 | 30 | | | 36 | | | | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **576** | **206** | **370** | | **226** | **278** | **72** | | | |
| **5.** | **ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ** | | | | | | | | | | | | | |
| 5.1 | Հոգեբանություն | 5 | | | 108 | 90 | 18 | | | | 108 | | | |
| 5.2 | Մանկավարժություն | | 4տ | | 36 | 28 | 8 | | | 36 | | | | |
| 5.3 | Մանկական գրականություն և ժողովրդական բանահյուսություն | 4 | | | 144 | 46 | 98 | | 66 | 78 | | | | |
| 5.4 | Դաս թատրոն | 8 | | | 72 | 12 | 60 | | | | | 34 | 38 | |
| 5.5 | Կրտսեր դպրոցի մանկավարժություն | 6 | | | 144 | 82 | 62 | | | | 72 | 72 | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5.6 | Հատուկ մանկավարժություն | | 5 տ | | 36 | 22 | 14 | | | | 36 | | | |
| 5.7 | Դպրոցավարություն | | 5տ | | 36 | 28 | 8 | | | | 36 | | | |
| 5.8 | Տրամաբանություն | | 6տ | | 144 | 24 | 120 | | | | 72 | 72 | | |
| 5.9 | Էկոլոգիական դաստիարակության հիմունքներ | | 6 տ | | 36 | 18 | 18 | | | | | 36 | | |
| 5.10 | Բնագիտություն | | 4 տ | | 54 | 26 | 28 | | | 54 | | | | |
| 5.11 | Հայոց լեզվի ուսուցման ավանդական և նորագույն մեթոդների համակցումը | | 7տ | | 72 | 14 | 58 | | | | | | 72 | |
| 5.12 | Հայոց լեզվի ուսուցման ժամանակակից մեթոդաբանությունը | | 8տ | | 72 | 60 | 12 | | | | | | | 72 |
| 5.13 | Թվաբանական, մաթեմատիկական, հանրահաշվական և երկրաչափական տարրերի ուսուցման մեթոդիկա | 6 | | | 108 | 18 | 90 | | | | 36 | 72 | | |
| 5.14 | Մաթեմատիկայի դասավանդման ժամանակակից մեթոդաբանություն | | 8տ | | 72 | 15 | 56 | | | | | | 18 | 54 |
| 5.15 | Տեխնոլոգիայի հիմունքներ և մեթոդաբանություն | 7 | | | 72 | 22 | 50 | | | | | | 72 | |
| 5.16 | Աշխատանք բնական և արհեստական նյութերով | | 6տ | 6 | 72 | 12 | 60 | | | | | 72 | | |
| 5.17 | Կերպարվեստ և ուսուցման մեթոդիկա | | 7տ | | 72 | 28 | 44 | | | | | | 72 | |
| 5.18 | Նկարչություն և ծեփ | 6 | | 6 | 72 | 26 | 46 | | | | | 72 | | |
| 5.19 | Երգ, երաժշտություն և դասավանդման մեթոդիկա | | 6տ | | 72 | 26 | 46 | | | | | 72 | | |
| 5.20 | Պար և ռիթմիկա | 8 | | | 72 | 14 | 58 | | | | | | | 72 |
| 5.21 | Ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա | | 6տ | | 90 | 38 | 52 | | | | | 90 | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 1656 | 649 | 1006 | | 66 | 168 | 360 | 592 | 272 | 198 |
| 6. | ԸՆՏՐՈՎԻ | | | | 72 | | | | | | | | | 72 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 72 | | | | | | | | | 72 |
| | ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ | | | | 38 | | | | | 2 | | | | 36 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 38 | | | | | 2 | | | | 36 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 3096 | | | | 576 | 684 | 576 | 648 | 288 | 324 |
| | ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | 300 | | | | | | | | | |
| | Շաբաթվա ժամերի քանակը | | | | | | | | 36 | 36 | 36 | 36 | 36 | 36 |

| | IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ | | | N | VII. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ |
|---|---|---|---|---|---|
| 1 | | | | | ԿԱԲԻՆԵՏՆԵՐ |
| 2 | | | | 1 | Անատոմիայի, ֆիզիոլոգիայի, հիգիենայի և առողջապահության |
| 3 | | | | 2 | Գրականության, հայոց լեզվի և ուսուցման մեթոդիկայի |
| 4 | | | | 3 | Մաթեմատիկայի և ուսուցման մեթոդիկայի |

| | | | |
|---|---|---|---|
| | | | |
| | V. ՊՐԱԿՏԻԿԱ | Կիսամյակ | Շաբաթ |
| 1 | Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցմամբ | IV, VI, VII | 2, 4, 1 |
| 2 | Ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմամբ | VII, VIII | 8, 6 |
| 3 | Նախավարտական պրակտիկա | VIII | 5 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 26 |
| | | | |

VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

1. Պետական համալիր քննություն «Հայոց լեզու՝ ուսուցման մեթոդիկայով» առարկայից (ընգրկում է Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ, Հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, Շարահյուսություն և ոճաբանություն, Խոսքի զարգացում, Հայոց լեզվի ուսուցման ավանդական և նորագույն մեթոդների համակցումը, Հայոց լեզվի ուսուցման ժամանակակից մեթոդաբանություն մոդուլները )
2. Պետական համալիր քննություն «Մաթեմատիկա՝ ուսուցման մեթոդիկայով» առարկայից (ընգրկում է Մաթեմատիկա, Թվաբանական, մաթեմատիկական, հանրահաշվական և երկրաչափական տարրերի ուսուցման մեթոդիկա, Մաթեմատիկայի դասավանդման ժամանակակից մեթոդաբանություն մոդուլները)
3. Պետական համալիր քննություն «Մանկավարժություն՝ մասնավոր մեթոդիկաներով» առարկայից (ընգրկում է Մանկավարժություն, Կրտսեր դպրոցի մանկավարժություն, Հատուկ մանկավարժություն, Տեխնոլոգիայի հիմունքներ և մեթոդաբանություն, Տեխնոլոգիայի հիմունքներ և մեթոդաբանություն Երգ, երաժշտություն և դասավանդման մեթոդիկա, Ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա մոդուլները)

| | |
|---|---|
| 4 | Մանկավարժության և հոգեբանության |
| 5 | Կերպարվեստի և դասավանդման մեթոդիկայի |
| 6 | Երաժշտության և դասավանդման մեթոդիկայի |
| 7 | Տեխնոլոգիայի և ուսուցման մեթոդիկայի |
| 8 | Ֆիզիկական դաստիարակության մեթոդիկայի |
| 9 | Օտար լեզուների |
| | ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ |
| 1 | Տեղեկատվական հաղորդակցման համակարգեր |
| 2 | Անհատական համակարգիչների |
| | ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐ |
| 1 | Տեխնոլոգիայի |
| | ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ |
| 1 | Մարզադահլիճ |
| 2 | Մարզահրապարակ |

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքները, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի համար սահմանված ժամերի հաշվին:

Ըստ առարկաների՝ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի, ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է քոլեջի խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը,բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված
նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:

4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի
ընդհանուր տևողությունը:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Քոլեջը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:
12. Պետական ամփոփիչ ատեստավորումը կարող է անցկացվել նաև դիպլոմային նախագծի կամ դիպլոմային աշխատանքի միջոցով: